ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱԽՍԵՐՈՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ. 2024-2050

ՇՈՒԿԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՐԻ ԾՐԱԳԻՐ

Դեկտեմբեր, 2022

Այս հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Հաշվետվության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Հայաստանի էներգահամակարգի նվազագույն ծախսերով զարգացման պլանի ավարտական հաշվետվություն. 2024-2050

Շուկայի ազատականացման և էլեկտրաէներգիայի առևտրի ծրագիր

Պայմանագիր # 72011118C00001

Պատրաստվել է՝
Ամերիկայի Միացյալ Նահանգների
Միջազգային զարգացման
գործակալության հայաստանյան
առաքելության համար
ՀՀ, ք. Երևան 0082, Ամերիկյան խճուղի 1

Պատրաստել է՝
Tetra Tech ES, Inc.
1320 North Courthouse Road, Suite 600
Arlington, VA 22201
www.tetratech.com

Սույն հաշվետվությունը պատրաստվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից դիտարկման նպատակով: Այն պատրաստվել է Tetra Tech ES, Inc. ընկերության կողմից՝ Շուկայի ազատականացման և էլեկտրաէներգիայի առևտրի ծրագրի համար, պայմանագիր # 72011118C00001: Սույն հրապարակման մեջ արծարծված հեղինակի տեսակետները պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ I

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ I

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ I

ԲԱԶԱՅԻՆ ՍՑԵՆԱՐ 2

ԸՆՏՐՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ 5

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14

ԲԱԺԻՆ 1. TIMES-ՀԱՅԱՍՏԱՆ ՄՈԴԵԼԻ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱԶԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԶԱՅԻՆ ՏԱՐՈՒՄ 16

ՄՈԴԵԼԻ ԿԱՐԳԱԲԵՐՈՒՄԸ 25

ԲԱԺԻՆ 2. ԲԱԶԱՅԻՆ ՍՑԵՆԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 26

ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ 26

ՕԳՏԱԿԱՐ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 29

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ 32

ԲԱԶԱՅԻՆ ՍՑԵՆԱՐԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 36

ԲԱԶԱՅԻՆ ՍՑԵՆԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 37

ԲԱԺԻՆ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 47

ԸՆՏՐՎԱԾ ՍՑԵՆԱՐՆԵՐ 47

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՃԻ ՍՑԵՆԱՐՆԵՐ 48

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԳՆԻ ՍՑԵՆԱՐՆԵՐ 71

ԱՏՈՄԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ 84

ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ 99

ՋԳ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՍՑԵՆԱՐՆԵՐ 128

ԴԵՊԻ ՎՐԱՍՏԱՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՆԵՐԿՐՈՒՄ/ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ 135

ՀԱՎԵԼՎԱԾ I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԶԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ 146

ՀԱՎԵԼՎԱԾ II. ՄՈԴԵԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 149

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ANPP	ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
CCGT	ՀՇԳՑԷ	Համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայան
CHP	Կոգեներացիա	Էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրություն
EE	ԷԱ	Էներգաարդյունավետություն
EU	ԵՄ	Եվրոպական միություն
EV	ԷՄ	Էլեկտրական մեքենա
FEC	ԷՎՍ	Էլեկտրաէներգիայի վերջնական սպառում
GDP	ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
GHG	ՋԳ	Ջերմոցային գազեր
GT	ԳՏ	Գազային տուրբին
GW	ԳՎտ	Գեգավատ
GWh	ԳՎտժ	Գեգավատժամ
HPP	ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան
IEA	ԷՄԳ	Էներգետիկայի միջազգային գործակալություն
LCEDP	ՆԾԶՊ	Էներգահամակարգի նվազագույն ծախսերով զարգացման պլան
LWR	ԹՋՌ	Թեթև ջրային ռեակտոր
MLET		Շուկայի ազատականացման և էլեկտրաէներգիայի առևտրի ծրագիր
MW	ՄՎտ	Մեգավատ
NPP	ԱԷԿ	Ատոմային էլեկտրակայան
PV	ՖՎ	Ֆոտովոլտային
RES	ՎԷԱ	Վերականգնվող էներգիայի աղբյուր
SMR	ՓՄՌ	Փոքր մոդուլային ռեակտոր
TPES	ԱԷՀՄ	Առաջնային էներգապաշարների համախառն մատակարարում
TPP	ՋԷԿ	Ջերմային էլեկտրակայան
TWh	ՏՎտժ	Տերավատժամ
USAID	ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
USD	ԱՄԴ	ԱՄՆ դոլար
VAT	ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
VVER	ՋՋԷՌ	Ջրա-ջրային էներգետիկ ռեակտոր
WEO	ՀԷՁԿ	Համաշխարհային էներգետիկայի զարգացման կանխատեսում

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայաստանի էներգահամակարգի նվազագույն ծախսերով 2024-2050 թվականների զարգացման պլանի (ՆԾԶՊ) սույն հաշվետվությունը պատրաստվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) շուկայի ազատականացման և էլեկտրաէներգիայի առևտրի (MLET) ծրագրի կողմից: MLET-ը աջակցում է Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի բարեփոխումների իրականացմանը, էներգետիկայի ոլորտի ռազմավարության մշակմանը և Վրաստանի հետ միջպետական առևտրի խթանմանը:

Հայաստանի 2024-2050 թվականների ՆԾԶՊ-ի նպատակն է որոշում կայացնողներին տրամադրել ելակետային տեղեկատվություն՝ էներգիայի ապագա պահանջարկի բավարարման տարբերակների վերաբերյալ:

Բաժին 1-ում նկարագրվում է Հայաստանի էներգետիկայի ոլորտը բազային տարվա (2019 թ.) դրությամբ և մանրամասն ներկայացվում է մուտքային տվյալների համապատասխանեցումը TIMES-Հայաստան մոդելի կարգաբերման նպատակին: Բաժին 2-ում ամփոփվում են բազային սցենարի հիմնական ենթադրություններն ու արդյունքները և վերլուծվում են մինչև 2050 թվականը կանխատեսվող վերջնական սպառման պահանջարկի վրա ազդող գործոնները: Բաժին 3-ը ներկայացնում է ընտրված քաղաքականության սցենարները և ամփոփում դրանց հիմնական ենթադրությունները և արդյունքները: Այն անդրադառնում է շահագրգիռ կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող հնարավոր այլընտրանքային սցենարներին՝ Հայաստանի էներգահամակարգի զարգացման հավանական ուղիները արտացոլելու համար: Նշվածը ներառում է քաղաքականությունների ընտրությունը, ինչպես նաև զգայունության վերլուծությունը՝ պահանջարկի գործոնների փոփոխությունից բխող հնարավոր ազդեցությունը գնահատելու համար: Ներկայացված սցենարները միտված են մինչև 2050 թվականը Հայաստանի էներգահամակարգում քաղաքականության և ռազմավարության մշակման համար մուտքային կարևոր ելակետ տրամադրելուն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Էներգետիկայի միջազգային գործակալության (ԷՄԳ) տեխնոլոգիական համակարգերի վերլուծական ծրագրի շրջանակում մշակված TIMES մոդելի գեներատորի միջոցով, համադրելով մոդելավորման երկու՝ տեխնիկական և տնտեսական, փոխլրացնող մոտեցումներ:[1] TIMES մոդելը հարթակ է ստեղծում իրականացնելու էներգահամակարգի ինտեգրված մոդելավորում, որը նախատեսված է ուղղորդելու մի շարք էներգետիկական, տնտեսական և շրջակա միջավայրի պլանավորման հարցերի վերաբերյալ քաղաքականության ձևավորումը՝ դրանով իսկ աջակցել հիմնավորված ներդրումային առաջնահերթություններ սահմանելուն: Հավելված 2-ում ներկայացված է TIMES մոդելի նկարագրությունը: TIMES մոդելը միտված է ապահովելու ընդամենը նվազագույն ծախսերով էներգիայի մատակարարում՝ միաժամանակ կայացնելով որոշումներ սարքավորումների ուղղությամբ ներդրումների, դրանց շահագործման, առաջնային էներգիայի մատակարարման և դիտարկված շրջաններում առևտրի վերաբերյալ:

TIMES հարթակի հնարավորությունները թույլ են տալիս՝

- Ընդգրկել ամբողջ էներգահամակարգը՝ ռեսուրսների արդյունահանումից մինչև վերջնական պահանջարկ,

[1] https://iea-etsap.org/index.php/etsap-tools/model-generators/times

- Կիրառել նվազագույն ծախսերի լավարկում՝ ռեսուրսների օգտագործման և տեխնոլոգիաների ներդրման համար առավել ծախսարդյունավետ մոդել ընտրելու նպատակով,

- Կիրառել գնահատման շրջանակ միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականության և ծրագրերի համար, որոնք կարող են ազդել էներգահամակարգի զարգացման վրա, և հաշվարկել այդ քաղաքականության և ծրագրերի կատարման արդյունքում առաջացած ծախսերը և ընտրված տեխնոլոգիաների արժեքը:

Այսպիսով գործիքը թույլ է տալիս մշակել և համեմատել էներգահամակարգի զարգացման հնարավոր սցենարները, ինչը կարող է էներգետիկայի ոլորտի քաղաքականության հարցերում համաձայնություն ապահովելու արդյունավետ միջոց հանդիսանալ: Բացի մոդելավորման հիմնական առավելություններից, TIMES-ի շրջանակը ներառում է մոդելի կառավարման հզոր գործիքներ, որոնք առավել ճշգրիտ տեղեկատվություն են տրամադրում որոշում կայացնողներին:

Տիպային TIMES մոդելը հայաստանյան պայմաններին հարմարեցնելու և TIMES-Հայաստան մոդել ստանալու նպատակով, որպես բազային տարի է սահմանվել այն ժամանակահատվածը, որի համար հասանելի էր Հայաստանում օգտագործվող բոլոր էներգակիրների արտադրության և սպառման մասին տվյալների ամբողջական փաթեթը՝ էներգետիկ հաշվեկշիռը: Միևնույն ժամանակ, բազային տարվա համար անհրաժեշտ էր ներկայացնել էներգիայի արտադրության և սպառման տեխնոլոգիաները տնտեսության բոլոր ոլորտների համար, վերլուծել և տրոհել էներգիայի նախնական քանակը բոլոր վերջնական սպառման ոլորտների միջև:

Երբ 2021թ. ապրիլին մոդելի կարգաբերման նպատակով մեկնարկեց տվյալների հավաքագրման գործընթացը, ամենավերջին տարին, որի համար առկա էին բոլոր վիճակագրական տվյալները, 2019 թվականն էր: Միևնույն ժամանակ, COVID-19-ը և 2020 թվականին քաղաքական իրավիճակը Հայաստանում հանգեցրել էին տնտեսության զարգացման և էներգետիկայի բնագավառի շահագործման արտասովոր դրսևորումների: 2019 թվականի տվյալների հիման վրա մոդելի կարգաբերումից հետո, նվազագույն ծախսերով պլանի մշակման առաջին փուլը՝ բազային սցենարի մշակումն էր 2024-2050 թվականների պլանավորման ժամանակահատվածի համար:

ԲԱԶԱՅԻՆ ՍՑԵՆԱՐ

Հայաստանի տնտեսության, էլեկտրաէներգետիկայի ոլորտի զարգացման ուղիների, նոր արտադրական հզորությունների և պահանջարկի կողմում տեխնոլոգիաների ներդրման տեմպերի և էներգիայի հնարավոր աղբյուրների օգտագործմանն առնչվող ենթադրություններն են.

- Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսման համաձայն՝ Հայաստանի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճի տեմպը կկազմի 4.2% 2024 թվականին և 4.0% 2026 թվականին: Հաջորդող տարիներին ՀՆԱ-ի աճի տեմպը ընդունվում է անփոփոխ՝ 2026 թվականի աճի տեմպին հավասար:

- Բնակչության թվաքանակը բացասական աճ կցուցաբերի՝ -0.2% պլանավորման ժամանակահատվածի համար:

- Արդյունաբերության ոլորտը օգտակար էներգիայի հիմնական սպառողներից է, գրանցելով մոտ 4% միջին տարեկան աճ: Բնակչության և առևտրի ոլորտների

մասնաբաժինները համեմատաբար ցածր են և միջին տարեկան կտրվածքով կազմում են համապատասխանաբար 2.2% և 2.7%:

- Վառելիքի գների կանխատեսումը հիմնված է 2021 թվականի Համաշխարհային էներգետիկայի զարգացման կանխատեսման հաշվետվությամբ (ՀԷԶԿ) ներկայացված ԵՄ երկրների համար ԷՄԳ-ի կողմից կատարված գնի կանխատեսումների վրա:

- Ենթադրություն է արվել, որ էլեկտրաէներգիայի կորուստները հաղորդման և բաշխման ցանցերում կնվազեն՝ բազային տարում 8.6 %-ից մինչև 8.1 % պլանավորման ժամանակահատվածի վերջում:

- Հաշվի առնելով Արցախում 2020 թվականին ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը, էլեկտրաէներգիայի ներմուծման և արտահանման մոդելավորումը կատարվել է 2021թ. փաստացի տվյալներով: Բազային սցենարում Հայաստանի էլեկտրաէներգիայի փոխհոսքերը մոդելավորվել են առանց Վրաստանի հետ էլեկտրաէներգիայի փոխանակման: Նշվածի արդյունքում պայմաններ են ստեղծվել գնահատելու Հայաստանում էներգիայի կանխատեսվող պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ աղբյուրները և արտադրության տեխնոլոգիաները:

- Հաշվի առնելով Հայաստանում առկա էներգետիկ պաշարները և տեխնիկական հնարավորությունները, կիրառվել են արտադրական հզորությունների սահմանափակումներ:

- Հայաստանի կառավարությունը Հայաստանի էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրում կարևորում է Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում միջուկային էներգիայի առկայությունը: Բազային սցենարի մշակման ընթացքում իրականացված բազմաթիվ մոդելավորումները ցույց տվեցին, որ միակ տարբերակը, որտեղ մոդելը ընտրում է ատոմակայան կառուցել, այն մոդելն է, որտեղ ջերմային կայանի կառուցման սահմանափակում է դրված: Սույն հաշվետվության ներքո ներկայացված բազային սցենարի համար ենթադրություն է արվել, որ պլանավորման ժամանակահատվածում նոր ջերմային էլեկտրակայան չի կառուցվելու:

Բազային սցենարի հաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ բնական գազը գերակշռող էներգիայի աղբյուրն է պլանավորման ողջ ժամանակահատվածում: Դրա մասնաբաժինը առաջնային էներգապաշարների համախառն մատակարարման մեջ (ԱԷՀՄ) 2024 թվականի դրությամբ կազմում է մոտ 52% և 2027 թվականին ՀԱԷԿ-ի շահագործումից դուրս բերելուց հետո աճում մինչև 74%: ՎԷԱ մասնաբաժինը ԱԷՀՄ-ում 7%-ից աճում է մինչև 14%: Նավթամթերքի մասնաբաժինը պլանավորման ամբողջ ժամանակահատվածում գրեթե անփոփոխ է:

Էներգիայի վերջնական սպառումը (ԷՎՍ) պլանավորման ժամանակաշրջանում կավելանա ավելի քան 50 %-ով, առանց ոլորտների մասնաբաժինների էական փոփոխության: Արդյունաբերության և առևտրի ոլորտները 2024-ից 2050 թվականների ընթացքում ԷՎՍ-ի աճ-ի միտում են ցուցադրում՝ համապատասխանաբար չորս և երկու տոկոսային կետով: Բնական գազը, էլեկտրաէներգիան և նավթամթերքը ապահովում են ընդհանուր ԷՎՍ-ի 98 %-ը, ընդ որում բնական գազը ապահովում է ամենաբարձր մասնաբաժինը պլանավորման ողջ ժամանակահատվածում: Բազային սցենարը ենթադրում է, որ պլանավորման ժամանակահատվածի ավարտին ԷՎՍ-ի 24%-ը կվերագրվի կատարելագործված և ավելի բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաներով սպառմանը, իսկ մնացած մասը՝ առկա տեխնոլոգիաներով սպառմանը, որոնք օգտակար ծառայության ժամկետի ավարտից հետո կփոխարինվեն նույնատիպ տեխնոլոգիաներով:

Նշված միջոցառումների իրականացման ծախսերը կկազմեն 68 մլրդ ԱՄՆ դոլար (2019 թ. դոլարով)։ Այդ ծախսերում ներառված են գյուղատնտեսության, առևտրի, արդյունաբերության, բնակչության և տրանսպորտի ոլորտներում էներգիայի մատակարարման և էներգիայի վերջնական սպառման պահանջարկի բավարարմանն առընչվող բոլոր ծախսերը։ Ներդրումների կատեգորիայում մոդելը ներառում է ոչ միայն նոր էլեկտրակայանների կամ նոր արդյունաբերական օբյեկտների կառուցման, այլ նաև գոյություն ունեցող օբյեկտների փոխարինման ծախսերը։ Ըստ ոլորտների ԷՎՍ-ի համար փոփոխական և հաստատուն շահագործման և պահպանման ծախսերը ներառում են բոլոր այն ծախսերը (բացառությամբ վառելիքի), որոնք անհրաժեշտ են մատակարարման, հաղորդման և բաշխման համակարգերում և պահանջարկի կողմում բոլոր տեխնոլոգիաների և տեղակայանքների անվտանգ ու հուսալի շահագործումն ապահովելու համար։

Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նվազագույն ծախսերով արտադրության կառուցվածքում ակնկալվում է ՎԷԱ և պահեստավորման տեխնոլոգիաների զարգացում։ Այդ տեխնոլոգիաները 2050 թվականին կներառեն 2630 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայաններ, 375 ՄՎտ հզորությամբ հողմակայանները, 439 ՄՎտ հզորությամբ փոքր հիդրոէլեկտրակայաններ (ՓՀԷԿ) և 141 ՄՎտ հզորությամբ խոշոր ՀԷԿ-եր (Լոռիբերդ և Շնող), ինչպես նաև 130 ՄՎտ հզորությամբ պահեստավորման կայաններ։ Միևնույն ժամանակ, 600 ՄՎտ դրվածքային հզորությամբ ատոմային էլեկտրակայանի (ԱԷԿ) կառուցումը 2033 թվականին հանդիսանում է կանխատեսվող պահանջարկի բավարարման նվազագույն ծախսերով լուծում։ Նշված զարգացման համար կպահանջվի 13 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրում։

Սույն ուսումնասիրության շրջանակում գնահատվել է երկու կարևոր ցուցանիշ՝ ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումները և էներգետիկ անկախության մակարդակը, որոնց վերաբերյալ հիմնական արդյունքները նկարագրված են ստորև։

Բազային սցենարում ՋԳ տարեկան արտանետումները արտահայտված ածխածնի երկօքսիդի համարժեքով ($CO_{2\ հմ}$) տատանվում են 6.2-ից մինչև 8.0 մեգատոննա (Մտ) 2024–2050 թվականների ժամանակահատվածում։ Նշված աճը էլեկտրաէներգետիկական համակարգում արտանետումները զգալիորեն նվազեցնելու արդյունք է, մինչդեռ այլ ոլորտներում ակնկալվում է արտանետումների քանակի ավելացում։ Էլեկտրաէներգետիկական համակարգի ՋԳ արտանետումների ամենացածր մակարդակը 2050 թվականին է և կազմում է 19 կիլոտոննա (կտ), ինչը կազմում է ՋԳ ընդհանուր արտանետումների ընդամենը 0.2 %-ը։ Նշվածը պայմանավորված է էներգիայի արտադրության կառուցվածքում ՎԷԱ մասնաբաժնի զգալի աճով, ինչպես նաև նոր ԱԷԿ-ի ներդրմամբ։ Պլանավորման հորիզոնում արտանետումների ամենաբարձր ցուցանիշը տրանսպորտի ոլորտում է, որին հաջորդում է բնակչությունը։ 2050 թվականին դրանց մասնաբաժինները ՋԳ արտանետումների ընդհանուր ծավալում կազմում են համապատասխանաբար 35% և 27%։ Բնական գազի արտանետումների մասնաբաժինն առավելագույնն է պլանավորման հորիզոնում, որին հաջորդում են բենզինը և դիզելը։ Այս երեք աղտոտիչների գումարային մասնաբաժինը արտանետումների 98%-ն է կազմում։

Էներգետիկ անկախությունը երկրի ներքին էներգաարտադրության մասնաբաժինն է ԱԷՀՄ-ում։ Ակնկալվում է, որ 2024 թվականին էներգետիկ անկախության մակարդակը կկազմի 36.8%։ 2027 թվականին ՀԱԷԿ-ի շահագործումից դուրս հանելուց հետո էներգետիկ անկախությունը կնվազի ավելի քան երկու երրորդ անգամ կազմելով 12.9 տոկոս։ ՎԷԱ տեխնոլոգիաների, մասնավորապես՝ արևային էներգիայի, լայնածավալ ներդրման և նոր ԱԷԿ-ի կառուցման շնորհիվ այս ցուցանիշը կվերականգնվի և 2050 թվականին կհասնի 38.3 %-ի։

ԸՆՏՐՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՃԻ ՏԵՄՊԻ ՍՑԵՆԱՐՆԵՐ

Հայաստանի էներգահամակարգի զարգացման կանխատեսման նպատակով ուսումնասիրվել է ՀՆԱ-ի աճի տեմպի երկու սցենարի՝ բազային սցենարում դիտարկված ՀՆԱ-ի աճի տեմպի համեմատ ՀՆԱ-ի աճի տեմպի 50%-ով բարձրացում (Բարձր աճ) և նվազեցում (Ցածր աճ): Եվս երկու սցենար դիտարկում են արդյունաբերության ոլորտում 2027 թվականին էլեկտրաէներգիայի պահանջարկի 200 ՄՎտ-ով ավելացում (Արդյունաբերության ոլորտի ավելացած պահանջարկ) և արդյունաբերության ոլորտում տեխնոլոգիաների արդյունավետության չափավոր զարգացում (Արդյունաբերության ոլորտի Էներգաարդյունավետություն): Բոլոր աճի սցենարներում նոր հանածո վառելիքով էլեկտրաէներգիա արտադրող կայանի կառուցում չի դիտարկվում:

Համակարգի ընդհանուր ծախսերը Բարձր աճի սցենարում կկազմեն 81 մլրդ. ԱՄՆ դոլար, իսկ ցածր աճի սցենարով՝ 57.5 մլրդ ԱՄՆ դոլար: Բերված ծախսերը փոխվում են այս երկու սցենարների ՀՆԱ-ի աճի փոփոխություններին համաչափ: Արդյունաբերության ոլորտի ավելացած պահանջարկի սցենարի համար համակարգի ընդհանուր ծախսերը կազմում են 69 մլրդ ԱՄՆ դոլար: Արդյունաբերության ոլորտի էներգաարդյունավետության սցենարի համար համակարգի ընդհանուր ծախսերը կազմում են 68.4 մլրդ ԱՄՆ դոլար:

Բարձր աճի սցենարում ԱԷՀՄ-ն 2030 թվականից սկսած կայուն աճում է, ինչը, հիմնականում ատոմային էներգիայի և բնական գազի լրացուցիչ օգտագործման արդյունք է՝ համեմատած բազային սցենարի հետ: Միևնույն ժամանակ, մինչև 2027 թվականը ԱԷՀՄ-ը չնչին նվազում է՝ պահանջարկը ավելի արդյունավետ տեխնոլոգիաներով ծածկելու պատճառով: Ցածր աճի սցենարում ԱԷՀՄ-ը ցույց է տալիս կայուն նվազում մինչև 2045 թվականը, ինչը միջուկային էներգիայի, բնական գազի և նավթամթերքի օգտագործման կրճատման արդյունք է: 2045-2050 թվականների ԱԷՀՄ-ի աննշան աճը պայմանավորված է ՎԷԱ-ի մասնաբաժնի ավելացումով: Արդյունաբերության ոլորտի ավելացած պահանջարկի սցենարում ԱԷՀՄ-ը կայուն աճում է 2027 թվականից սկսած, ինչը հիմնականում ատոմային էներգիայի լրացուցիչ օգտագործման արդյունք է (համեմատած բազային սցենարի հետ): Արդյունաբերության ոլորտի էներգաարդյունավետության սցենարում ԱԷՀՄ-ի մակարդակները փոփոխվում են բազային սցենարի փոփոխության տրամաբանությամբ և մի փոքր աճում են պլանավորման ժամանակաշրջանի վերջում՝ ավելի ցածր արդյունավետության տեխնոլոգիաների կիրառման պատճառով ավելացած պահանջարկը ծածկելու համար:

Պլանավորման ժամանակաշրջանում ՀՆԱ-ի աճի երկու սցենարներում էլ ԷՎՍ-ն աճում է Բարձր աճի սցենարում ավելի արագ տեմպերով՝ համեմատած ցածր աճի սցենարի: Բարձր աճի սցենարում ամենաբարձր աճի տեմպը ցուցադրում է էլեկտրաէներգիան, որին հաջորդում է նավթամթերքը և բնական գազը: Պլանավորման ժամանակաշրջանի վերջում խոշոր սպառողներ են հանդիսանում առևտրի, տրանսպորտի և բնակչության ոլորտները: Ցածր աճի սցենարում ԷՎՍ-ն ավելի դանդաղ տեմպով է աճում, ընդ որում՝ առավելագույն աճը ցուցադրում են էլեկտրաէներգիան և բնական գազը: Նավթամթերքը 2024-2050 թվականներին 4 տոկոս բացասական աճ է գրանցում: Արդյունաբերության ոլորտի ավելացած պահանջարկի և էներգաարդյունավետության սցենարների համար ԷՎՍ-ն բազային սցենարից էապես չի տարբերվում:

Արտադրական հզորությունների կոնֆիգուրացիայի էական փոփոխությունները վերաբերում են ատոմային, ՎԷԱ և պահեստավորման տեխնոլոգիաների ներդրմանը: Բարձր աճի սցենարում էներգիայի աճող պահանջարկը ծածկվում է 2033 թվականին խոշոր ԱԷԿ-ի (1,080 ՄՎտ) արտադրության հաշվին: Արդյունքում, ՎԷԱ հզորությունների մասնաբաժինը 2033-ից 2045 թվականը նվազում է: 2050 թվականին ՎԷԱ հզորությունների մասնաբաժինը աճում է Երևանի համակցված շոգե-գազային ցիկլով էլեկտրակայան (ՀՇԳՑԷ) - 2-ի շահագործման ժամկետի ավարտման պատճառով: Պլանավորման ժամանակահատվածում

պահեստավորման հզորությունները ավելանում են, իսկ Լոռիբերդ ՀԷԿ-ի կառուցումը նախատեսվում է 2050 թվականին՝ բազային սցենարում 2024 թվականին փոխարեն:

Ցածր աճի սցենարում ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի ավարտից հետո արտադրության կառուցվածքում ԱԷԿ ներառված չէ: ԱԷԿ-ի բացակայությունը ծածկվում է ՎԷԱ և պահեստավորման հզորությունների ավելացման շնորհիվ: Այս սցենարով Շնող ՀԷԿ-ի կառուցումը նախատեսվում է 2033 թվականին ավելի վաղ քան բազային սցենարում՝ 2033 թվականին, իսկ Լոռիբերդ ՀԷԿ-ի կառուցում նախատեսված չէ:

Արդյունաբերության ոլորտի ավելացած պահանջարկի սցենարում արտադրական հզորությունների կոնֆիգուրացիայի էական փոփոխությունները կապված են ԱԷԿ-ի կառուցման, ՎԷԱ և պահեստավորման տեխնոլոգիաների զարգացման հետ, մինչդեռ արդյունաբերության ոլորտի էներգաարդյունավետության սցենարում կոնֆիգուրացիայի աննշան փոփոխությունները պայմանավորված են 2040-2050 թվականներին արևային և հիդրո պոմպային պահեստավորման կայանների հզորությունների աճով:

Արտադրական տեխնոլոգիաների կառուցվածքի փոփոխության արդյունքում զգալիորեն փոփոխվում է նոր հզորությունների համար պահանջվող էլեկտրաէներգետիկական ոլորտի ընդհանուր ներդրումների չափը: Բարձր աճի սցենարի դեպքում պահանջվում է շուրջ 16.6 մլրդ ԱՄՆ դոլարի, իսկ ցածր աճի սցենարի դեպքում՝ շուրջ 10 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրում: Արդյունաբերության ոլորտի ավելացված պահանջարկի սցենարի դեպքում էլեկտրաէներգետիկայի ոլորտում ներդրումային ծախսը կազմում է շուրջ 12 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ Արդյունաբերության ոլորտի արդյունավետության սցենարի դեպքում՝ շուրջ 14 մլրդ ՄԱՆ դոլար:

ՀՆԱ-ի աճի տեմպի երկու սցենարների դեպքում էլ հիմնական արտանետումներ ստեղծող էներգակիրը մնում է բնական գազը՝ ՋԳ ընդհանուր արտանետումների մոտ 80% մասնաբաժնով դիտարկվող գրեթե բոլոր տարիներին: Բարձր աճի սցենարում տրանսպորտի և բնակչության ոլորտները միասին ՋԳ ընդհանուր արտանետումների առավելագույն մասնաբաժինն ունեն պլանավորման ժամանակաշրջանի վերջում (2050 թվական)՝ համապատասխանաբար 38.4 % և 24.2 %: Ցածր աճի սցենարում տրանսպորտի և բնակչության ոլորտները միասին շարունակում են մնալ արտանետումների ամենամեծ մասնաբաժինն ունեցող ոլորտները՝ 32.7 % և 30.5 % մասնաբաժիններով, դրանց հաջորդում են առևտրի (15.1%), արդյունաբերության (12.8%) ոլորտները և վառելիքի մատակարարումը (8.0 %): Արդյունաբերության ոլորտում ավելացած պահանջարկի սցենարով 2027 թվականին արտանետումների զգալի աճը պայմանավորված է գազատուրբինային էլեկտրակայանների արտադրության աճով: Պլանավորման հորիզոնի վերջում արտանետումները գրեթե հասնում են բազային սցենարի մակարդակին՝ կազմելով 7992 կտ: Արդյունաբերության ոլորտի էներգաարդյունավետության սցենարով զարգացումը տեղի է ունենում նույն տրամաբանությամբ, ինչ բազային սցենարում, ոչ էապես ավելի բարձր արտանետումներով:

Բարձր աճի սցենարով 2033 թվականին Հայաստանը կհասնի էներգետիկ անկախության ամենաբարձր մակարդակին (48 %), այնուհետև պլանավորման հորիզոնի վերջում կնվազի մինչև 40 %՝ աճող պահանջարկը հանածո վառելիքի հաշվին բավարարելու պատճառով: Ցածր աճի սցենարում, որտեղ արտադրության կառուցվածքում ԱԷԿ-ը բացակայում է, էներգետիկ անկախության առավելագույն մակարդակը գրանցվում է 2050 թվականին (31%)՝ 2027 թվականից 13%-ով կայուն աճից հետո: 2026 թվականին ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի ավարտից հետո Արդյունաբերության ոլորտի ավելացած պահանջարկի և էներգաարդյունավետության սցենարներում անկախության մակարդակը նվազում է բնական գազի ներմուծման աճի պատճառով:

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԳՆԻ ՍՑԵՆԱՐՆԵՐ

Բազային սցենարի վերլուծությունը ցույց է տալիս, որ պլանավորման հորիզոնում Հայաստանը մեծապես կախված է բնական գազից: Հայաստանի էներգահամակարգի նվազագույն ծախսերով զարգացման ուղիների վրա բնական գազի գնի ազդեցությունը գնահատելու համար մոդելավորվել և վերլուծվել է երեք սցենար:

- ԵՄ գազի գնի սցենարի համար բնական գազի գինը մինչև 2024 թվականը ընդունվել է Ռուսաստանից ներմուծվող բնական գազի ներկայիս գնին հավասար՝ 165 ԱՄՆ դոլար/1000 մ^3, որից հետո՝ ՀԷՋԿ-ում ներկայացված ԵՄ-ում բնական գազի գներին հավասար:
- Անփոփոխ գազի գնի սցենարի համար բնական գազի գինը մինչև 2033 թվականը ընդունվել է ներկայիս գնին հավասար՝ 165 /1000 մ^3, որից հետո՝ բազային սցենարում ներկայացված բնական գազի գներին հավասար: Այս սցենարում նոր հանածո վառելիքով էլեկտրական էներգիայի արտադրություն չի նախատեսվում:
- Չափազանց բարձր գնի սցենարում դիտարկվել են ԵՄ-ում բնական գազի գների 2022 թվականի փոփոխությունները: Ենթադրվում է, որ մինչև 2033 թվականը Հայաստանում գազի սակագինը կհասնի ԵՄ-ի բնական գազի գնին (1000 $/1000 մ^3), այնուհետև գազի մատակարարումը կդադարեցվի: Այս ենթադրությունների ի հայտ գալու պարագայում կպահանջվեն բոլորովին նոր և տարբերվող քաղաքականության մոտեցումներ, որոնք կապահովեն.
  - Անցում բնական գազից էլեկտրաէներգիայի, կենսավառելիքի և հանածո վառելիքի խառնուրդի, ինչպես նաև նավթամթերքի օգտագործմանը,
  - ԱԷԿ, ՎԷԱ արտադրական հզորությունների ավելացում՝ գազատուրբինային էլեկտրակայանների բացակայության արդյունքում ստեղծված բացը լրացնելու համար,
  - Հաղորդման և բաշխման ցանցերի թողունակության մեծացում՝ էլեկտրաէներգիայի ավելացած ծավալի հաղորդումն ապահովելու համար:

Հաշվի առնելով այս սցենարի ենթադրությունների իրականացման փոքր հավանականությունը, դրա արդյունքները քննարկվում են միայն սցենարի արդյունքների բաժնում:

ԵՄ գազի գնի և Անփոփոխ գազի գնի սցենարների վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգի ընդհանուր ծախսերը (ԵՄ գազի գնի՝ 66.5 մլրդ դոլար, իսկ Անփոփոխ գազի գնի սցենարում՝ 65.9 մլրդ դոլար) նվազում են, երբ նվազում է գազի գինը:

ԱԷՀՄ-ի փոփոխություններն ուղղակիորեն կապված են նոր ԱԷԿ-ի ներդրման հետ: ԵՄ գազի գնի սցենարում ընտրվել են նոր ՀԾԳՑԷ և գազատուրբինային (ԳՏ) էլեկտրակայաններ, իսկ նոր ԱԷԿ չի նախատեսվում, քանի որ գազի գինը այս սցենարում ավելի ցածր է, քան բազային սցենարում բոլոր դիտարկվող տարիներին: Տնտեսական տեսանկյունից լուծումը բնական գազի օգտագործումն է ամբողջ պլանավորման հորիզոնում: Անփոփոխ գազի գնի սցենարում, երբ ներկրվող գազի գները սկսած 2036 թվականից հավասարվում են բազային սցենարի արժեքներին, 2045 թվականին 600 ՄՎտ հզորությամբ նոր ԱԷԿ է գործարկվում՝ աճող պահանջարկը ծածկելու համար: ԵՄ գազի գնի և անփոփոխ գազի գնի սցենարներում ԷՎՍ ծավալները գրեթե նույնն են, ինչ բազային սցենարում, քանի որ ԷՎՍ-ի վրա ազդող գործոնները էապես չեն փոխվում:

Էլեկտրաէներգիայի արտադրության տեխնոլոգիաների նվազագույն ծախսերով կոնֆիգուրացիայի զգալի փոփոխությունները կապված են միջուկային, ՎԷԱ և գազատուրբինային տեխնոլոգիաների ներդրման հետ: ԵՄ գազի գնի սցենարով երեք նոր ՀԾԳՑԷ կայան է ներդրվում համակարգում՝ 2027, 2033, 2045 թվականներին և մեկ նոր ԳՏ՝

2050 թվականին: Այս սցենարով նոր ԱԷԿ չի ներդրվում: Լոռիբերդ ՀԷԿ-ի ներդրումը 2045թ.-ից (բազային սցենար) տեղափոխվում է 2050 թվական: Շնող ՀԷԿ-ի ներդրում նախատեսված չէ: Միևնույն ժամանակ, պլանավորման հորիզոնի վերջում էլեկտրաէներգետիկական համակարգում ներդրվում է բազային սցենարի համեմատ լրացուցիչ 1,121 ՄՎտ հզորությամբ արևային ՖՎ հզորություն:

Անփոփոխ գազի գնի սցենարով էլեկտրաէներգետիկական համակարգում 2033 թվականին ներդրվում է 25 ՄՎտ հզորությամբ երկրաջերմային կայան, Լոռիբերդ և Շնող ՀԷԿ-երի կառուցման տարեթիվը բազային սցենարում 2045 թվականից տեղափոխվում է 2023 թվական, 600 ՄՎտ հզորությամբ նոր ԱԷԿ-ը բազային սցենարի 2033 թվականի փոխարեն ներդրվում է ավելի ուշ՝ 2045 թվականին, իսկ պլանավորման ժամանակաշրջանի վերջում կառուցվում է 210 ՄՎտ հզորությամբ լրացուցիչ արևային ՖՎ կայան, յուրացվում է հողմային հզորությունների մոդելավորված ողջ ներուժը (500 ՄՎտ), ինչպես նաև 2033 և 2040 թվականներին կառուցվում է երկու հիդրոկուտակիչ պոմպակայան:

Էլեկտրաէներգետիկական համակարգում նոր հզորությունների համար նախատեսված ներդրումները զգալիորեն փոխվում են սցենարների միջև՝ արտադրության տեխնոլոգիաների կառուցվածքի փոփոխության արդյունքում: ԵՄ գազի գնի սցենարով պահանջվում է շուրջ 7 մլրդ ԱՄՆ դոլարի (42%-ով պակաս, քան բազային սցենարով) և անփոփոխ գնի սցենարով պահանջվում է 13 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրում:

Այս երկու սցենարներում ՋԳ արտանետումների հիմնական աղբյուրը շարունակում է մնալ բնական գազը, որի մասնաբաժինը ՋԳ ընդհանուր արտանետումների մեջ կազմում է 83 % գրեթե բոլոր դիտարկվող տարիներին: 2050 թվականին ամենաշատ աղտոտող ոլորտներն են տրանսպորտը և բնակչությունը:

Հայաստանի էներգետիկ անկախության մակարդակը փոփոխվում է ԱԷՀՄ-ի փոփոխման տրամաբանությամբ և նվազում է բնական գազի ներմուծման աճին զուգահեռ:

ԱՏՈՄԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ

Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի նվազագույն ծախսերով զարգացման ուղին վերլուծելու համար դիտարկվել է ատոմային հզորությունների զարգացման հինգ սցենար, որոնք հաշվի են առնում ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման և փոքր մոդուլային ռեակտորի (ՓՄՌ) ներդրման տարբերակները: ՀԱԷԿ 2032 սցենարով ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետը նախատեսվում է երկարացնել մինչև 2032 թվականը, ՀԱԷԿ 2037 սցենարով՝ մինչև 2037 թվականը: Եվս երկու սցենարներ դիտարկում են ՀԱԷԿ-ի մինչև 2037 թվականը շահագործման ժամկետի երկարացման և ՓՄՌ-300 մոդուլների տարբեր ժամանակահատվածներում ներդրման համադրությունը: Առաջին դեպքում դիտարկվում է մեկ ՓՄՌ-300 մոդուլի ներդրումը, իսկ երկրորդում՝ երկու ՓՄՌ-300 մոդուլների ներդրումը՝ 2037 և 2045 թվականներին: Հինգերորդ սցենարը դիտարկում է ՀԱԷԿ-ի կյանքի տևողության երկարացում մինչև 2026 թվականը և մեկ ՓՄՌ-300 մոդուլի ներդրում 2036 թվականին:

Համակարգի ընդհանուր ծախսերը 0.4 և -2,3 տոկոսով տարբերվում են բազային սցենարից, ինչը հիմնականում պայմանավորված է նոր ատոմային բլոկի (բլոկերի) ներդրման արժեքով:

ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարացումը հանգեցնում է մինչև 2030 թվականը էլեկտրաէներգիայի արտադրության վերաբաշխման՝ ատոմային և գազատուրբինային կայանների միջև: ՀԱԷԿ 2032 և ՀԱԷԿ 2037 սցենարների ԱԷՀՄ-ն ավելի բարձր է, քան բազային սցենարում: ԱԷԿ-ի պարտադրված ընտրությամբ սցենարներում, բազային սցենարից տարբերությունը հիմնականում պայմանավորված է դրվածքային հզորության և նոր ՓՄՌ-300

մոդուլի (մոդուլների) ներդրման ժամանակի հետ: ԷՎՍ-ի կանխատեսումը գործնականում չի տարբերվում բազային սցենարից:

Ատոմային հզորությունների զարգացման սցենարներում արտադրական հզորությունների կոնֆիգուրացիայի հիմնական փոփոխությունները կապված են ատոմային, ՎԷԱ և պահեստավորման տեխնոլոգիաների ներդրման հետ: Բոլոր սցենարներում ՀԱԷԿ-ի և նոր ՓՄՌ-300 մոդուլների էլեկտրաէներգիայի արտադրությունը հանգեցնում է նոր արևային ՖՎ հզորությունների վերաբաշխմանը և հողմակայանների ներդրման բազային սցենարից տարբեր ժամանակացույցի: Էլեկտրաէներգիայի արտադրությունը ՀԱԷԿ 2032 և ՀԱԷԿ 2037 սցենարներում ուղղակիորեն համապատասխանում է ընտրված արտադրական հզորություններին: Բազային սցենարի համեմատ արտադրության կառուցվածքի հիմնական փոփոխությունը կապված է ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարացման հետ, որի արդյունքում 2027-ից մինչև 2030 թվականը արտադրվում է գրեթե 3.37 ՏՎտժ էլեկտրաէներգիա, փոխարինելով գազատուրբինային էլեկտրակայանների արտադրանքը: ՀԱԷԿ 2037 սցենարում բազային սցենարի համեմատ գոյացած մոտ 160 ՄՎտ հզորության բացը 2033-2036 թվականներին ծածկելու համար մոդելը դիտարկում է լրացուցիչ հողմային և արևային հզորություններ, ինչպես նաև գազատուրբինային կայանների արտադրանքը: ՓՄՌ-300 սցենարով 2033-2036 թվականներին էլեկտրաէներգետիկական համակարգում ատոմային էներգիայի արտադրություն նախատեսված չէ: Այս ժամանակահատվածի պահանջարկը հիմնականում բավարարվում է գազատուրբինային կայանների և արևային ՖՎ կայանների լրացուցիչ արտադրանքի հաշվին, մինչդեռ նոր ԱԷԿ-ի պարտադրված ներդրումը ՀԱԷԿ 2037 և մեկ ՓՄՌ և ԱԷԿ 2037 և երկու ՓՄՌ սցենարներում հանգեցնում է ՎԷԱ արտադրության կրճատմանը:

Արտադրական տեխնոլոգիաների կառուցվածքի փոփոխությունը հանգեցնում է էներգահամակարգի նոր արտադրական հզորությունների համար նախատեսված ընդհանուր ներդրումների փոփոխությանը: Ընդհանուր ներդրումների չափը ըստ ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարացման սցենարների գործնականում չի տարբերվում պլանավորման հորիզոնում (12.7 մլրդ ԱՄՆ դոլար ՀԱԷԿ 2032 և 12.5 ԱՄՆ դոլար ՀԱԷԿ 2037 սցենարներում): ԱԷԿ-ի ներդրմանն ուղղված ներդրումների վերաբաշխում է դիտվում միայն 2033-ից 2040 թվականներին: Մինչդեռ ավելի մեծ ներդրումներ են պահանջվում մյուս երեք սցենարներում (ՀԱԷԿ 2026 և մեկ ՓՄՌ-300, ՀԱԷԿ- 2037 և մեկ ՓՄՌ-300, ՀԱԷԿ 2037 և երկու ՓՄՌ-300), կապված նոր ՓՄՌ-300 մոդուլի ներդրման ժամկետի և ներդրվող հզորության հետ: Մասնավորապես, ՀԱԷԿ 2032 և ՀԱԷԿ 2037 սցենարներով նոր հզորությունների համար ընդհանուր ներդրումները կազմում են շուրջ 12.7 և 12.5 մլրդ դոլար: ՀԱԷԿ 2037 և մեկ ՓՄՌ սցենարի դեպքում ընդհանուր ներդրումները կազմում են մոտ 13 մլրդ ԱՄՆ դոլար, ՀԱԷԿ 2037 և երկու ՓՄՌ սցենարի դեպքում՝ մոտ 14 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ՀԱԷԿ 2026 և մեկ ՓՄՌ-300 սցենարի դեպքում՝ 13.6 մլրդ ԱՄՆ դոլար:

ՋԳ-ի $CO_{2հմ}$-ով արտահայտված գումարային արտանետումները ուղղակիորեն կախված են ատոմային և ՎԷԱ էլեկտրաէներգիայի օգտագործման ծավալից: ՋԳ արտանետումները գրեթե հավասար են բոլոր սցենարներում, բացառությամբ ՀԱԷԿ 2026 և մեկ ՓՄՌ-300-ի, որտեղ արտանետումները նույնն են, ինչ բազային սցենարում 2027 և 2030 թվականներին, և տարբերվում են 2033 թվականի ատոմային այլ սցենարներից ատոմային հզորության ավելի քիչ օգտագործմամբ: ՋԳ արտանետումները բոլոր սցենարներում 2024 թվականին նույնն են, քանի որ արտադրության կառուցվածքը նույնական է:

Անկախության մակարդակը չի գերազանցում 40 %-ը դիտարկված բոլոր տարիներին և նվազագույնն է ՀԱԷԿ 2026 և ՓՄՌ-300 սցենարում՝ պայմանավորված ատոմային և արևային արտադրությունը փոխարինող գազատուրբինային կայանների արտադրության ավելացմամբ:

ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ

Էներգաարդյունավետության (ԷԱ) սցենարներում հաշվի է առնվում վերջնական սպառման տեխնոլոգիաների բարելավումը և էլեկտրական մեքենաների (ԷՄ) մասնաբաժնի ավելացումը: Դրանք դիտարկում են սպառման կողմում տեխնոլոգիաների արդյունավետության բարելավման տարբեր մակարդակներ: Մասնավորապես, ԷԱ -առանց սահմանափակումների սցենարում կատարելագործված տեխնոլոգիաներ ընտրելու սահմանափակումները հանված են, իսկ մյուս սցենարները մոդելավորվում են, հաշվի առնելով մինչև 2050 թվականը վերջնական սպառման ավելի արդյունավետ տեխնոլոգիաների 20 %-ի, 50 %-ի և 90 %-ի չափով պարտադրված օգտագործումը (համապատասխանաբար՝ ԷԱ-20, ԷԱ-50 և ԷԱ-90 սցենարներ): Հայաստանի էներգետիկայի ոլորտի վրա ԷՄ մասնաբաժնի հնարավոր աճի ազդեցությունը գնահատելու համար երկու սցենարում դիտարկվում է ԷՄ մասնաբաժնի աճ 2030 թվականի 5%-ից մինչև 2050 թվականի 50%-ը (ԷՄ-50), և ԷՄ մասնաբաժնի աճը մինչև 100% 2050 թվականին (ԷՄ-100): ԷՄ սցենարները դիտարկում են միայն թեթև մարդատար մեքենաների էլեկտրականի անցումը և չեն դիտարկում այլ տրանսպորտային միջոցները: ԷԱ բոլոր սցենարներում հանածո վառելիքով էլեկտրաէներգիայի արտադրություն նախատեսված չէ:

Համակարգի ընդհանուր ծախսերը բոլոր սցենարներում ավելի ցածր են, քան բազային սցենարում: Ծախսերը նվազում են վերջնական սպառման տեխնոլոգիաներում ԷԱ մակարդակի բարձրացմանը զուգահեռ, ներառյալ ԷՄ մասնաբաժնի ավելացումը: Արդյունավետ տեխնոլոգիաների արժեքը ավելի բարձր է, ինչը փոխհատուցվում է էներգիայի սպառման կրճատման հաշվին և արդյունքում համակարգի ընդհանուր ծախսերը նվազում են:

Առավել էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրումը հանգեցնում է ԱԷՀՄ-ի նվազմանը, քանի որ Հայաստանը կարողանում է բավարարել վերջնական պահանջարկը ավելի քիչ էներգիայով: Արդյունքում, բոլոր ԷԱ սցենարներում և ԷՄ-50 սցենարում, ԱԷՀՄ-ն պլանավորման ամբողջ ժամանակաշրջանում 2.3%-ով ավելի քիչ է բազային սցենարից համեմատելով գրեթե 30 տոկոսի հետ պլանավորման ամբողջ ժամանակահատվածում: Միևնույն ժամանակ, ԷՄ-100 սցենարի դեպքում էլեկտրաէներգիայի պահանջարկը աճում է և այն բավարարելու համար պահանջվում են նոր արտադրական հզորություններ, ինչպիսիք են 1,080 ՄՎտ հզորությամբ նոր ԱԷԿ-ը, և հանածո վառելիքի ավելի քիչ օգտագործում: ՋԷԿ-երի համեմատ ԱԷԿ-ի ցածր արդյունավետության պատճառով ավելանում է առաջնային էներգիայի մատակարարումը: Համեմատությունները ցույց են տալիս, որ ԷՎՍ-ն բոլոր սցենարներում ավելի քիչ է, քան բազային սցենարում, և կազմում է 84.1-104.8 Մտն.հ. (բազային սցենարում՝ 107.3 Մտն.հ.):

Ավելի քիչ էներգիայի սպառումը նվազեցնում է էլեկտրաէներգիայի նոր արտադրական տեխնոլոգիաների անհրաժեշտությունը: Հետևաբար, բոլոր ԷԱ սցենարներում էլեկտրաէներգետիկայի ոլորտի հզորությունները ավելի քիչ են, քան բազային սցենարում, և տարբերությունը տատանվում են -2,9 տոկոսից մինչև -8,5 տոկոս: Միևնույն ժամանակ, տրանսպորտի ոլորտում հանածո վառելիքի հսկայական ծավալների փոխարինումը Էլեկտրաէներգիայով հանգեցնում է էլեկտրակայանների դրվածքային հզորությունների ավելացմանը բազային սցենարի համեմատ՝ 675 ՄՎտ-ով ԷՄ-50 սցենարում և 267 ՄՎտ-ով ԷՄ-100 սցենարում:

Պահանջարկի տեխնոլոգիաների արդյունավետության մակարդակի և արտադրության տեխնոլոգիաների ներդրման ժամանակացույցի փոփոխությունները հանգեցնում են էլեկտրաէներգետիկայի ոլորտում նոր արտադրական հզորությունների համար պահանջվող ընդհանուր ներդրումների զգալի փոփոխությանը: Ներդրումների վրա ազդող հիմնական գործոններն են 600 ՄՎտ հզորությամբ նոր ԱԷԿ-ի ներդրումը ԷԱ-առանց սահմանափակումների, ԷԱ-50 և ԷԱ-90 սցենարներում, նոր 1,080 ՄՎտ հզորությամբ ԱԷԿ-ի ներդրումը ԷՄ-100 սցենարում և լրացուցիչ արևային ՖՎ հզորության ներդրումը ԷՄ-50 սցենարում: Ամենացածր ներդրումները պահանջվում են ԷԱ-առանց սահմանափակումների

սցենարում՝ 9.8 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ամենաբարձր ներդրումները՝ ԵՄ-100 սցենարում՝ 15 մլրդ ԱՄՆ դոլար:

Հանածո վառելիքի օգտագործման կրճատման և արտադրության կառուցվածքում ՎԷԱ և ԱԷԿ տեխնոլոգիաների մասնաբաժնի ավելացման շնորհիվ ՋԳ արտանետումները բազային սցենարի համեմատ նույնպես նվազում են -3.7 %-ից մինչև -34.4 %:

ԵՄ-100 սցենարում Հայաստանը 2033 թվականին հասնում է էներգետիկ անկախության բարձր մակարդակի (52 %)՝ խոշոր ԱԷԿ-ի (1,080 ՄՎտ) ներդրման արդյունքում, այնուհետև մինչև 2045 թվականը այն նվազում է մինչև 51 %՝ աճող պահանջարկը ավելի շատ հանածո վառելիքի հաշվին բավարարելու պատճառով: Պլանավորման հորիզոնի վերջում ՋԷԿ-երի փոխարինումը ՎԷԱ տեխնոլոգիաներով բարձրացնում է անկախության մակարդակը մինչև առավելագույն ցուցանիշը՝ 53%: ԵՄ-50 սցենարի համաձայն՝ 2033 թվականին Հայաստանի էներգետիկ անկախության մակարդակը հասնում է 41%-ի, այնուհետև 2050 թվականին շարունակաբար աճում է մինչև 44%՝ արևային ՖՎ-ների և հողմակայանների լայնածավալ ներդրման շնորհիվ: ԷԱ սցենարներում դրանց կորերն ու արժեքները փոփոխվում են ՋԳ արտանետումների փոփոխության հակադարձ տրամաբանությամբ:

ՋԳ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՍՑԵՆԱՐ

Սցենարում դիտարկվում է ԵՄ մակարդակին հավասար ածխածնի հարկի ազդեցությունը Հայաստանում էներգակիրների մատակարարման վրա: Ածխածնի հարկը մոդելավորվել է 50 դոլար/տոննա 2030 թվականին, իսկ դրանից հետո՝ 100 դոլար/տոննա արժեքով հիմք ընդունելով մոտակա տասնամյակներում ԵՄ-ում ածխածնի հարկի համար կանխատեսումները:

Համակարգի ընդհանուր ծախսերը այս սցենարով կազմում են 75.5 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը ավելի քան 10 տոկոսով գերազանցում է բազային սցենարի ցուցանիշը: Ածխածնի հարկի ավելացումն ազդում է համակարգի ընդհանուր ծախսերի վրա, նույնիսկ երբ այս սցենարի ՋԳ արտանետումները 4.3 %-ով ցածր են բազային սցենարում ստացված արժեքից:

Բազային սցենարի համեմատ ԱԷՀՄ-ի հիմնական տարբերությունը կապված է 600 ՄՎտ հզորությամբ ԱԷԿ-ի ավելի վաղ ներդրման հետ (2033-ի փոխարեն 2027 թվական) ներդրման հետ: Միևնույն արտադրանքն արտադրելու համար միջուկային տեխնոլոգիայի համար պահանջվում է ավելի շատ առաջնային վառելիք, քան գազատուրբինային կայանի համար: 2033 թվականից սկսած ՋԳ արտանետումների սցենարի և բազային սցենարի ԱԷՀՄ ցուցանիշները էականորեն չեն տարբերվում: ՋԳ արտանետումների սցենարի համար ԷՎՍ-ի կանխատեսումը չի տարբերվում բազային սցենարից:

Արտադրական հզորությունների կոնֆիգուրացիայի փոփոխությունները առավելապես կապված են գազատուրբինային էլեկտրակայանների և ՎԷԱ տեխնոլոգիաների, ինչպես նաև նոր ԱԷԿ-ի ներդրման ժամանակացույցի հետ: Նվազագույն ծախսերով լուծում է 250 ՄՎտ հզորությամբ ՀԾԳՑԷ կայանի իրականացումը 2050 թվականին և 234 ՄՎտ հզորությամբ ԳՏ-ի իրականացումը 2045 թվականին, ինչպես նաև պլանավորման հորիզոնում 191 ՄՎտ հզորությամբ արևային ՖՎ կայանների և 91 ՄՎտ հզորությամբ հողմակայանների կառուցումը ի հավելումն բազային սցենարով նախատեսված զարգացումներին: Լոռիբերդ և Շնող ՀԷԿ-երի կառուցումն այս սցենարում նվազագույն ծախսերով լուծում չի համարվում:

Արտադրական տեխնոլոգիաների կառուցվածքի փոփոխությունները հանգեցնում են նոր արտադրական հզորությունների համար պահանջվող ընդհանուր ներդրումների զգալի փոփոխությանը: Ներդրումների փոփոխության հիմնական պատճառը՝ էներգահամակարգում 484 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ նոր գազատուրբինային կայանների (ի հավելումն բազային սցենարով նախատեսվածի) և 282 ՄՎտ հզորությամբ ՎԷԱ կայանների ներդրումն է: Այս սցենարով նախատեսված նոր հզորությունների ներդրումային ծախսերը կազմում են 11.3 մլրդ ԱՄՆ դոլար:

600 ՄՎտ հզորությամբ նոր ԱԷԿ-ի ներդրման ժամկետի տեղափոխումը 2033-ից 2027 թվական հանգեցնում է գազատուրբինային կայանների փոխարինմանը և ՋԳ արտանետումների կրճատմանը: Հարկ է նշել, որ 2033 թվականից հետո ՋԳ արտանետումների սցենարի աղտոտիչներին վերաբերող արժեքները գրեթե կրկնում են բազային սցենարի արժեքները:

Հայաստանի էներգետիկ անկախության ամենաբարձր մակարդակը գրանցվում է 2027 թվականին (41%)՝ հիմնականում 600 ՄՎտ հզորությամբ նոր ԱԷԿ-ի ներդրման շնորհիվ, այնուհետև պլանավորման հորիզոնի վերջում այն նվազում է մինչև 37 տոկոս:

ԴԵՊԻ ՎՐԱՍՏԱՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՆԵՐԿՐՈՒՄ/ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ՍՑԵՆԱՐՆԵՐ

Սցենարներն ուսումնասիրում է Հայաստանի նվազագույն ծախսերով զարգացման ուղենիշը հետևյալ դեպքերի համար. առաջին դեպքում 300 ՄՎտ էլեկտրաէներգիայի արտահանում 2027 թվականից, իսկ երկրորդում՝ 300 ՄՎտ արտահանում 2027 թվականից և 1,050 ՄՎտ՝ 2040 թվականից, երկու դեպքում էլ Հոկտեմբեր-Մարտ ամիսներին: Երկու սցենարներում նախատեսվել է 50 ՄՎտ էլեկտրաէներգիայի ներկրում Վրաստանից՝ Ապրիլ-Սեպտեմբեր ամիսներին: Սցենարներում նոր հանածո վառելիքի կիրառմամբ էլեկտրաէներգիայի արտադրություն նախատեսված չէ:

Ներկրում/Արտահանում 300 ՄՎտ սցենարում համակարգի ընդհանուր ծախսերը կկազմեն 68.6 մլրդ ԱՄՆ դոլար (բազային սցենարի համեմատ 1.3 % ավելի) և Ներկրում/Արտահանում 1,050 ՄՎտ սցենարում՝ 70.2 մլրդ ԱՄՆ դոլար (3.6 % ավելի): Երկու սցենարներում էլ համակարգի ընդհանուր ծախսերը մեծ են արտահանման հզորության ավելացման հետ կապված լրացուցիչ ծախսերի պատճառով:

Արտահանման երկու սցենարներում ԱԷՀՄ-ի կանխատեսումները ներառում են էներգիայի լրացուցիչ աղբյուրներ՝ արտահանման լրացուցիչ պահանջարկը ծածկելու համար: ԱԷՀՄ-ն բազային սցենարի համեմատ աճում է, պայմանավորված մինչև 2027 թվականը բնական գազի և 2030 թվականից ատոմային էներգիայի լրացուցիչ օգտագործմամբ: ԷՎՍ-ն բազային սցենարից էապես չի տարբերվում:

Արտահանման երկու սցենարներով արտադրության կոնֆիգուրացիայի էական փոփոխությունները կապված են միջուկային, ՎԵԱ և պահեստավորման տեխնոլոգիաների զարգացման հետ:

Ներկրում/Արտահանում 300 ՄՎտ սցենարում էլեկտրաէներգետիկական համակարգի նվազագույն ծախսերով կոնֆիգուրացիայում դիտարկվում է 1,080 ՄՎտ հզորությամբ ԱԷԿ-ի ներդրում 2033 թվականին, ինչը հանգեցնում է բազային սցենարի համեմատ ՎԷԱ հզորությունների զգալի նվազեցմանը և խոշոր ՀԷԿ-երի ավելի ուշ կառուցմանը: Ներկրում/Արտահանում 1,050 ՄՎտ սցենարում համակարգի նվազագույն ծախսերով կոնֆիգուրացիայում դիտարկվում է 1,080 ՄՎտ հզորությամբ ԱԷԿ-ի ներդրում 2033 թվականին և ՎԷԱ հզորությունների ավելացում բազային սցենարի համեմատ: Մեծ քանակությամբ հարափոփոխ վերականգնվող էներգիայի պատշաճ օրական շահագործումն ապահովելու, ինչպես նաև նոր ԱԷԿ-ից մեծածավալ բազային արտադրությունն ապահովելու համար մոդելն ընտրում է լրացուցիչ հիդրոկուտակիչ պոմպակայաններ և լիթիում-իոնային մարտկոցներ: Ներկրում/Արտահանում 300 ՄՎտ սցենարում նոր հզորությունների համար կպահանջվի 12.4 մլրդ ԱՄՆ դոլար (3.9 տոկոսով ավելի, քան բազային սցենարով), իսկ Ներկրում/Արտահանում 1,050 ՄՎտ սցենարում՝ 17.8 մլրդ ԱՄՆ դոլար (38.4 տոկոսով ավելի, քան բազային սցենարում) ներդրում:

Այս սցենարներում ՋԳ գումարային արտանետումները աննշան տարբերվում են բազային սցենարից: Երկու սցենարների համար էլ հիմնական արտանետումներով էներգակիր մնում է բնական գազը, որը ՋԳ ընդհանուր արտանետումների մեջ ունի շուրջ 80 տոկոս

մասնաբաժին դիտարկվող տարիներին: Ընդհանուր արտանետումների ավելացմանն ամենաշատը նպաստում են տրանսպորտը և բնակչությունը:

Երկու սցենարում էլ Հայաստանն իր էներգետիկ անկախության ամենաբարձր մակարդակին է հասնում 2033 թվականին (շուրջ 51%), այնուհետև մինչև 2040 թվականը այդ ցուցանիշը փոքրինչ նվազում է հասնելով 46%-ի՝ հանածո վառելիքի կիրառմամբ ծածկվող պահանջարկի աճի պատճառով: Այնուհետև, Ներկրում/Արտահանում 1,050 ՄՎտ սցենարով էներգետիկ անկախության մակարդակը 2050 թվականին կրկին աճում է մինչև 48%, ինչը պայմանավորված է ավելի մեծ ծավալով ՎԷԱ հզորությունների ներդրմամբ, մինչդեռ Ներկրում/Արտահանում 300 ՄՎտ սցենարում դրա մակարդակը շարունակում է իջնել և պլանավորման ժամանակաշրջանի վերջում հասնում է 46%-ի:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հայաստանի 2024-2050 թվականների ՆԾԶՊ-ի արդյունքներն ընդգծում են նոր վերականգնվող էներգետիկայի զարգացմանն առավելագույն չափով նպաստող քաղաքականության և ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծման կարևորությունը: Նշվածը կապահովի արտադրական հզորությունների նվազագույն ծախսերով զարգացումը, կամրապնդի Հայաստանի էներգետիկ անվտանգությունն ու մրցունակությունը և կնվազեցնի ներկրվող էներգակիրներից կախվածությունը:
- Հայաստանը մինչև 2050 թվականը կարող է ունենալ ամբողջապես ածխածնային չեզոք էլեկտրաէներգետիկական համակարգ, եթե ատոմային և վերականգնվող էներգետիկան զարգանան զուգահեռ:
- Հայաստանի հանածո վառելիքի օգտագործումը մինչև 2050 թվականը կկազմի շուրջ 50%: Այս մակարդակը կարելի է էլ ավելի նվազեցնել՝ նոր տեխնոլոգիաների և պահանջարկի կառավարման գործիքների ներդրմամբ:
- Կանխատեսվում է, որ բնական գազը կհանգեցնի արտանետումների ավելի քան 80%-ի առաջացմանը բոլոր սցենարներում և այլ էներգակիրների համեմատ ՋԳ արտանետումների ամենամեծ աղբյուրը կհանդիսանա:
- Տրանսպորտի և տնային տնտեսությունների ոլորտները բոլոր դիտարկված սցենարներում կունենան էներգիայի սպառման ամենամեծ մասնաբաժինը ընդհանուր ԷՎՍ-ում՝ (միասին կազմելով 56%-ից մինչև 62%): Հատուկ քաղաքականության միջոցառումների իրականացումը, որը կապահովի բնակչության և տրանսպորտի կողմից ավելի շատ ՎԷԱ օգտագործում բնական գազի փոխարեն կամրապնդի Հայաստանի էներգետիկ անկախությունը:
- Դիտարկվող 21 սցենարներից 16-ում, նոր ԱԷԿ-ի առավելագույն հզորությունը չի գերազանցում 600 ՄՎտ-ը: Հինգ սցենարներում, որտեղ պահանջարկը բարձր է, նոր ԱԷԿ-ի հզորությունը հասնում է 1,080 ՄՎտ: Այդ սցենարներն են՝

  1. Բարձր աճ՝ բազային սցենարի համեմատ 50 տոկոս-ով բարձր աճ,
  2. Արդյունաբերության ոլորտում ավելացած պահանջարկ՝ 200 ՄՎտ լրացուցիչ բեռ արդյունաբերության ոլորտում,
  3. Ներկրում/Արտահանում 300 ՄՎտ՝ կանոնավոր 300 ՄՎտ արտահանում Վրաստան,
  4. Ներկրում/Արտահանում 1,050 ՄՎտ՝ ավելացված 1,050 ՄՎտ արտահանում Վրաստան,
  5. ԷՄ-100՝ Հայաստանում ԷՄ 100 % մասնաբաժին:

  Պահանջարկի բարձր աճի նշված հինգ սցենարները ենթադրում են պահանջարկի զգալի աճ, ինչը, հաշվի առնելով պատմական տվյալները, քիչ հավանական է: Դրա մասին վկայում է այն փաստը, որ վերջին 20 տարիներին Հայաստանի պահանջարկն աճել է մոտ 42%-ով, մինչդեռ բարձր պահանջարկի աճի 5 սցենարներով ենթադրվում է, որ պահանջարկը կաճի 228%-ով՝ 5.5 անգամ ավելի, քան պատմական աճն է:

  Այս սցենարներով 2050 թվականին պահանջարկը կավելանա մոտ 400 ՄՎտ-ով (2200 ՄՎտ-ից մինչև 2600 ՄՎտ), ինչը Հայաստանից կպահանջի 2036 թվականին կառուցել 1,080 ՄՎտ հզորությամբ նոր ԱԷԿ: Եթե այս ենթադրությունների վրա հիմնվելով Հայաստանում կառուցվի խոշոր ԱԷԿ (1,000 ՄՎտ կամ ավելի մեծ հզորությամբ), ամենայն հավանականությամբ, երկիրը ստիպված կլինի կրել կապիտալ ներդրումների ամբողջ բեռը՝ օգտագործելով ամբողջ հզորության միայն մի մասը:
- Խոշոր (1000 ՄՎտ կամ ավելի) ԱԷԿ-ի դեպքում կպահանջվի դադարեցնել Երևան ՀԾԳՑԷ և Երևան ՀԾԳՑԷ-2 բլոկերի շահագործումը 2036 թվականից, քանի որ դրանք այլևս

անհրաժեշտ չեն լինի: Թեև Երևան ՀԾԳՑԷ-ն պետական ընկերություն է, Հայաստանի կառավարությունը Էլեկտրաէներգիայի գնման պայմանագրի շրջանակներում պայմանագրային պարտավորություն ունի Երևան ՀԾԳՑԷ-2-ի նկատմամբ՝ 25 տարի ժամկետով մինչև 2046 թվականը: Արդյունքում էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր ծախսերը կաճեն, քանի որ նշված երկու էներգաբլոկներից առնվազն մեկի հաստատուն ծախսերը փոխհատուցելը հանդիսանում է Կառավարության պարտավորությունը:

- Շահագործման/կարգավարման տեսանկյունից խոշոր (1000 ՄՎտ կամ ավելի) ԱԷԿ-ը կսպասարկի համակարգի պիկային պահանջարկի մոտ 50%-ը և գիշերային նվազագույն պահանջարկի/սպառման գրեթե 100%-ը, ինչը կպահանջի անջատել բոլոր մյուս արտադրող կայանները (ջերմային, հիդրո և հողմային) գիշերվա ընթացքում (6-8 ժամ), և կհանգեցնի զգալի տեխնիկական/շահագործման հետևանքների, կամ անհրաժեշտ կլինի պահեստավորել դրանց արտադրած էլեկտրաէներգիան: Նման ծավալի էլեկտրաէներգիայի պահեստավորման համար կպահանջվեն մեծ մարտկոցային համակարգեր այնպիսի տեխնոլոգիաների ներառմամբ, որոնք դեռևս գտնվում են զարգացման վաղ փուլում և չեն հասել լայն կիրառության աստիճանի:
- Մեկ բլոկի հզորությունը պիկային պահանջարկի 50%-ը կազմելու դեպքում, տարեկան սպասարկման և/կամ համակարգի արտակարգ իրավիճակների ժամանակ կպահանջվի համակարգում նույն չափի պահուստային հզորություն: Նշվածը լրացուցիչ տնտեսական բեռ կառաջացնի էլեկտրաէներգիայի սպառողների համար՝ պահուստային հզորության բարձր արժեքի պատճառով:
- Համակարգի կարգավարման տեսանկյունից լավագույն փորձն է համակարգի պիկային պահանջարկի ոչ ավելի, քան 20%-ը ծածկող ջերմային բլոկի կառուցումը:

Հաշվի առնելով մշակված բոլոր սցենարների արդյունքները և ելնելով էներգետիկ անվտանգության և տնտեսական նկատառումներից, առաջարկվում է դիտարկել 600 ՄՎտ-ից ոչ ավելի հզորությամբ ատոմային արտադրություն: Պահուստային հզորության պահանջը նվազեցնելու համար նպատակահարմար է դիտարկել ավելի փոքր՝ առավելագույնը 300 ՄՎտ հզորությամբ մոդուլային ռեակտորների ներդնումը, ինչը երկրին հնարավորություն կտա բարելավել մատակարարման անվտանգությունը՝ չառաջացնելով լրացուցիչ ֆինանսական բեռ Հայաստանի տնտեսության և էլեկտրաէներգիայի սպառողների համար:

ԲԱԺԻՆ 1. TIMES-ՀԱՅԱՍՏԱՆ ՄՈԴԵԼԻ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱԶԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Էներգահամակարգը TIMES մոդելում արտացոլելու գործընթացը սկսվում է բազային տարվա վերջնական էներգետիկ հաշվեկշռի մուտքագրմամբ: Մոդելի կարգաբերման աշխատանքները սկսելու պահին՝ 2021 թվականի ապրիլին, վերջին տարին, որի համար հասանելի էին բոլոր վիճակագրական տվյալները 2019 թվականն էր: Միևնույն ժամանակ, COVID-19-ը և 2020 թվականին քաղաքական իրավիճակը Հայաստանում հանգեցրել էին տնտեսության զարգացման և էներգետիկայի բնագավառի շահագործման արտասովոր դրսևորումների: Մոդելում կիրառված 2019 թվականի Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռը ներկայացված է Հավելված 1-ում:

Սցենարներում ճշգրիտ արդյունքներ ստանալու նպատակով, բազային սցենարում անհրաժեշտ է պատշաճ արտացոլել բազային տարվա վառելիքի սպառումը և արտադրության կառուցվածքը, ինչպես նաև դրվածքային հզորություններն ըստ կայանի տեսակի: Նշվածը ներառում է նաև շահագործումից դուրսբերման տարին, առկա հզորությունը, սպառված վառելիքը, արտադրված էլեկտրաէներգիան, առավելագույն հասանելիությունը և ընդհանուր արդյունավետությունը: Մոդելի կարգաբերման համար օգտագործված բազային տարվա տվյալները ներկայացված են ստորև.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԶԱՅԻՆ ՏԱՐՈՒՄ

ԴՐՎԱԾՔԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2019 թվականի վերջի դրությամբ Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր դրվածքային հզորությունները կազմել են շուրջ 2916 ՄՎտ (Աղյուսակ 1.1):

Հայկական ատոմակայանի (ՀԱԷԿ) առաջին էներգաբլոկը շահագործման է հանձնվել 1976 թվականին, իսկ երկրորդը՝ 1980 թվականին: Կայանում տեղադրված է ՋՋԷՌ-440 (Ջ-270) տիպի երկու ռեակտոր՝ 815 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: 1988 թվականի դեկտեմբերին Սպիտակում տեղի ունեցած երկրաշարժից հետո 1989-ին ՀԱԷԿ-ի շահագործումը դադարեցվեց, թեև տեխնիկական խնդիրները բացակայում էին: 1995 թվականին, երկրի ծանր էներգետիկ ճգնաժամից հետո (1993–1995 թթ.), վերագործարկվեց երկրորդ էներգաբլոկը՝ 407,5 ՄՎտ դրվածքային հզորությամբ[2]: ՀԱԷԿ-ի արդիականացումից հետո վերջինիս հասանելի հզորությունը կազմում է 440 ՄՎտ:

Հայաստանի ջերմային էլեկտրակայանների (ՋԷԿ) ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է 1113.6 ՄՎտ[2], իսկ ընդհանուր հասանելի հզորությունը՝ 1038 ՄՎտ: Հրազդանի ՋԷԿ-ը և Հրազդան-5 կայանն ունեն երկակի այրման հնարավորություն՝ կարող են այրել և բնական գազ և/կամ մազութ: Հրազդանի ՋԷԿ-ի դրվածքային հզորությունը 410 ՄՎտ է, որից հասանելի է 370 ՄՎտ-ը, իսկ Հրազդան-5 կայանի դրվածքային հզորությունը 467 ՄՎտ է, որից հասանելի է 440 ՄՎտ-ը: Երևանի ՀԾԳՑԷ կայանի դրվածքային հզորությունը 229 ՄՎտ է, իսկ հասանելին՝ 220 ՄՎտ: Վերակառուցման արդյունքում հասանելի հզորությունը կազմում է 234 ՄՎտ:

2019 թվականի վերջի դրությամբ հիդրոկայանների դրվածքային հզորությունը շուրջ 1,340.5 ՄՎտ[2] է, այդ թվում 374.9 ՄՎտ փոքր ՀԷԿ-երը: Համակարգում գործում են նաև

[2] http://mtad.am/u_files/file/energy/Energy Strategy_ Jan 14 2021_English.pdf

հողմային կայաններ՝ 4.23 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ և ցանցին միացած 49.4 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայաններ:[3]

ԱՂՅՈՒՍԱԿ 1.1: ԴՐՎԱԾՔԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄՎՏ	
ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐՎԱԾՔԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2,915.27
ՀԱԷԿ (ՋՋԷՌ-440)	407.5
Հրազդանի ՋԷԿ	410
Հրազդան – 5 կայան	467
Երևան ՀԾԿՑԷ	228.6
Կոգեներացիա	8
Սեվան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադ	561.4
Որոտան ՀԷԿ-երի կասկադ	404.2
Փոքր ՀԷԿ-եր (<30 ՄՎտ)	374.9
Հողմային կայաններ	4.23
Արևային ՖՎ (առևտրային)	10[4]
Արևային ՖՎ (ինքնավար էներգաարտադրող)	39.44[5]

ՀԻԴՐՈ ԷՆԵՐԳԻԱ: Հայաստանի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալների համաձայն երկրի հիդրոէներգետիկ ռեսուրսների ներուժը 21.8 մլրդ կՎտժ է, ներառյալ խոշոր և միջին գետերը՝ 18.6 մլրդ կՎտժ ներուժով, և փոքր գետերը՝ 3.2 մլրդ կՎտժ ներուժով:[6]

- Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադը ներառում է յոթ ՀԷԿ՝ Սևան (34 ՄՎտ), Հրազդան (81 ՄՎտ), Արգել (224 ՄՎտ), Արզնի (71 ՄՎտ), Քանաքեռ (102 ՄՎտ), Երևան-1 (44 ՄՎտ) և Երևան-3 (5 ՄՎտ)՝ 561,4 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ: Կասկադը նախատեսված է տարեկան մինչև 2,32 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա արտադրելու համար: ՀԷԿ-երը գտնվում են Հրազդան գետի վրա և աշխատում են Սևանա լճից ոռոգման, ինչպես նաև Հրազդան գետի բնական ջրահոսով:

- Որոտանի ՀԷԿ-երի կասկադը ներառում է Սյունիքի մարզի Որոտան գետի վրա տեղակայված երեք ՀԷԿ: ՀԷԿ-երն աշխատում են բնական ջրահոսի վրա: Որոտանի ՀԷԿ-երն են Սպանդարյանը (76 ՄՎտ), Շամբը (171 ՄՎտ) և Տաթևը (157 ՄՎտ), որոնց ընդհանուր դրվածքային հզորությունը 404 ՄՎտ է և էլեկտրաէներգիայի տարեկան նախագծային արտադրությունը՝ 1.16 մլրդ կՎտժ:

- Փոքր ՀԷԿ-երի կառուցումը Հայաստանում վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման և էներգետիկ անկախության բարձրացման առաջին ներդրումն էր: Կայաններն առավելապես դերիվացիոն են և աշխատում են բնական ջրահոսի վրա: 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվում են 189 փոքր ՀԷԿ-եր՝ 375 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ: 2019

[3] https://psrc.am/uploads/files/Էլեկտրական Էներգիա/Մոնիտորինգ/Verlucakan2020.pdf
[4] https://www.psrc.am/uploads/files/Տարեկան հաշվետվություններ/3.pdf
[5] http://mtad.am/u_files/file/energy/I_Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռը 2019_ARM.pdf
[6] http://minenergy.am/page/448

թվականին նշված կայաններն արտադրել են շուրջ 956 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, ինչը Հայաստանում արտադրված ընդհանուր էլեկտրաէներգիայի մոտ 12.5 % է:[6]

ՀՈՂՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱ: 2005 թվականի դեկտեմբերին Պուշկինի լեռնանցքում շահագործման է հանձնվել ցանցին միացված 2.64 ՄՎտ հզորությամբ առաջին տարածաշրջանային հողմակայանը, որն արտադրում է տարեկան շուրջ 2.7 մլն կՎտժ: Եվս երեք հողմակայան կառուցվել է 2015, 2016 և 2019 թվականներին՝ համապատասխանաբար 250 կՎտ, 20 կՎտ և 1.32 ՄՎտ դրվածքային հզորությամբ: 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ շահագործվում է 4 հողմակայան՝ 4.23 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ և 16.4 մլն կՎտժ տարեկան արտադրությամբ[7]: Եվս մեկ հողմակայան՝ 4 ՄՎտ դրվածքային հզորությամբ կառուցման փուլում է:

ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱ: Արևային ՖՎ էլեկտրակայանների կառուցումը արագորեն աճում է: 2021 թվականի սկզբին գործում էին 15 արևային էլեկտրակայաններ՝ 16.7 ՄՎտ[8] ընդհանուր դրվածքային հզորությամբ և 21.3 մլն կՎտժ[9] տարեկան արտադրությամբ: Եվս 29 արևային էլեկտրակայան՝ 117.05 ՄՎտ դրվածքային հզորությամբ գտնվում է կառուցման փուլում:**Error! Bookmark not defined.**

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՊԱՌՈՒՄԸ

Բազային տարվա արտադրության և սպառման գումարային տվյալները ներկայացված են Աղյուսակ 1.2-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.2: ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՌՈՒՄ, ՄԻԼԻՈՆ ԿՎՏԺ	
Արտադրություն	7,632.3
Էլեկտրակայանի սեփական կարիքներ	334.0 (4.4%)
Հաղորդման ցանցի կորուստները մուտքի նկատմամբ	106.2 (1.6%)
Բաշխման ցանցի կորուստները մուտքի նկատմամբ	442.0 (7.1%)
Արտահանում	1,251.1
Ներկրում	292.6
Վերջնական սպառում	5,802.0
Սպառողների թիվը[10]	1,042,000

Նկար 1.1-ում ներկայացված է էլեկտրաէներգիայի արտադրությունն ըստ էներգիայի աղբյուրների մասնաբաժինների 2019 թվականի համար: Բնական գազը և ատոմային էներգիան կազմում են արտադրության շուրջ 70 %-ը, իսկ ՎԷԱ-ն՝ շուրջ 30 %-ը: Այսպիսով, էլեկտրամատակարարման անկախության մակարդակը կազմում է շուրջ 60 %:[11]

[7] https://psrc.am/uploads/files/Էլեկտրական Էներգիա/Մոնիտորինգ/Verlucakan2020.pdf
[8] https://psrc.am/uploads/files/Էլեկտրական Էներգիա/Մոնիտորինգ/19.pdf
[9] https://psrc.am/uploads/files/Էլեկտրական Էներգիա/Հաշվետվություններ/2020/2. Հիմնական բնութագրեր/4 Eramsyak.pdf

[10] https://www.ena.am/downloads/ENA_Annual_Report_2019_ARM.pdf
[11] Ատոմային էներգիան միջազգայնորեն դիտարկվում է որպես տեղական էներգիայի աղբյուր:



Նկար 1.1: Էլեկտրաէներգիայի արտադրությունն ըստ աղբյուրների մասնաբաժինների, միլիոն կՎտժ, %

Կենցաղային նպատակներով էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը ներկայացված է Նկար 1.2-ում: Ատոմային էներգիան էական դեր է խաղում բազային բեռի ծածկման համար՝ բավարարելով ներքին էլեկտրաէներգիայի պահանջարկի 35 %-ը: Թեև միջուկային վառելիքը ներմուծվող էներգիայի աղբյուր է, ՀԱԷԿ-ի ռեակտորները համարվում են ներքին էներգիայի աղբյուր, քանի որ ՀԱԷԿ-ը յուրաքանչյուր տարի լիցքավորում է իր միջուկային վառելիքի ընդհանուր ծավալի միայն մեկ երրորդը՝ որպես շահագործման և պահպանման գործընթացի մաս: ՎԷԱ կայանները և ՀԱԷԿ-ը ապահովում են ներքին սպառման համար էներգետիկ անկախության մոտ 72 %-ը:



Նկար 1.2: Ներքին սպառման համար էլեկտրաէներգիայի արտադրությունն ըստ աղբյուրների, միլիոն կՎտժ, %

Նկար 1.3-ում ներկայացված են 2009–2019 թվականների ընթացքում էլեկտրաէներգիայի արտադրության պատմական տվյալներն ըստ էլեկտրակայանների: Տվյալներից նկատելի է ՎԷԱ-ի և ՀԱԷԿ-ի արտադրության մասնաբաժնի զգալի աճը:



Նկար 1.3: Էլեկտրաէներգիայի արտադրությունն ըստ կայանների և տարիների, մլրդ կՎտժ

Ըստ ոլորտների էլեկտրաէներգիայի սպառման մասնաբաժիններից (Նկար 1.4), երևում է, որ կենցաղային (բնակչություն), սպասարկման և արդյունաբերության ոլորտներն ունեն էլեկտրաէներգիայի ընդհանուր սպառման ամենամեծ մասնաբաժինները, ինչը տվյալ ոլորտների մանրամասն մոդելավորում է պահանջում՝ հաշվի առնելով էլեկտրաէներգիայի սպառման զգայունությունը այս ոլորտների զարգացման նկատմամբ:[12]



Նկար 1.4: Էլեկտրաէներգիայի սպառման մասնաբաժիններն ըստ ոլորտների, միլիոն կՎտժ, %

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՆԵՐԿՐՈՒՄՆ ՈՒ ՍՊԱՌՈՒՄԸ

Հայաստանի բնական գազի մատակարարման համակարգի հիմնական ցուցանիշներն 2019 թվականի համար ամփոփված են Աղյուսակ 1.3-ում: Գազաֆիկացման մակարդակը գրեթե 95% է, և բաժանորդներին առավելապես հասանելի է գազամատակարարման

[12] Սպասարկման ոլորտը գտնվում է «Այլ» անվան տակ՝ ըստ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տերմինաբանության:

համակարգին մոտակա մուտքի հնարավորություն: Այնուամենայնիվ, շատ տնային տնտեսություններ՝ հատկապես գյուղական վայրերում, ջեռուցման, սննդի պատրաստման և ջրի տաքացման համար օգտագործում են կենսավառելիք՝ փայտ և գոմաղբ: Աբովյան քաղաքում տեղակայված գազի ստորգետնյա պահեստարանը հնարավորություն է տալիս ձմռանը կարգավորել բեռի օրական տատանումները և պահեստավորել բնական գազը՝ արտակարգ իրավիճակների դեպքում անխափան մատակարարում ապահովելու համար: Հայաստանը Ռուսաստանից բնական գազ է ներկրում կենցաղային և արդյունաբերական ոլորտներում օգտագործման նպատակով, իսկ հարավային հարևան երկրից՝ գազ-էլեկտրաէներգիա փոխանակման պայմանագրի շրջանակներում: Պայմանագրի համաձայն՝ Հայաստանը 1 մ^3 բնական գազի դիմաց վերադարձնում է 3 կՎտժ էլեկտրաէներգիա.

ԱՂՅՈՒՍԱԿ 1.3: ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ, ՄԻԼԻՈՆ Մ^3	
Ներկրում՝	2,545
Ռուսաստանից	2,167
Հարավային սահմանից	378
Հաղորդման ցանցի կորուստները մուտքի նկատմամբ	86.8
Բաշխման ցանցի կորուստները մուտքի նկատմամբ	27.4
Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան[13]	140
Սպառողների թիվը	713,606[14]

Բնական գազի սպառումն ըստ տնտեսության ոլորտների ներկայացված է Նկար 1.5-ում: Հիմնական սպառողներն են բնակչությունը, տրանսպորտի և էլեկտրաէներգետիկայի ոլորտները: Տրանսպորտային միջոցների տեխնիկական ձևավորման արդյունքում 2000 թվականից սկսած, երբ բենզինի կամ դիզելային վառելիքի փոխարեն տրանսպորտային միջոցները անցել են բնական գազի օգտագործման, տրանսպորտի ոլորտում սպառումն արագորեն աճել է:



Նկար 1.5: Գազի սպառումն ըստ ոլորտների, միլիոն մ^3, %

[13] https://armenia.gazprom.com/about/today/
[14] https://armenia-am.gazprom.com/press/news/2020/07/1607/

ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԺԵՔԸ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ. Համակարգային նշանակության էլեկտրաէներգիա արտադրող կայանների սակագները ներկայացված են Աղյուսակ 1.4.-ում:[15]

ԱՂՅՈՒՍԱԿ 1.4 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՍԱԿԱԳՆՈՎ ՎԷԱ ԿԱՅԱՆՆԵՐԻ) (ԱՌԱՆՑ 20% ԱԱՀ, ՈՒԺԻ ՄԵՋ Է 2021Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ)

ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ	ՄԻԱՎՈՐ	ՍԱԿԱԳԻՆ
ՀԱԷԿ		
Հզորության դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ դոլար[16])/կՎտ/ամիս	5,016.42 (9.608)
Էլեկտրաէներգիայի դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ ցենտ)/կՎտժ	4.448 (0.8)
Հրազդանի ՋԷԿ		
Հզորության դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ դոլար)/կՎտ/ամիս	350.61 (0.671)
Էլեկտրաէներգիայի դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ ցենտ)/կՎտժ	33.575 (6.4)
Հրազդան-5 կայան		
Հզորության դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ դոլար)/կՎտ/ամիս	498.05 (1.018)
Էլեկտրաէներգիայի դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ ցենտ)/կՎտժ	26.876 (5.49)
Երևան ՀՇԳՑԷ		
Հզորության դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ դոլար)/կՎտ/ամիս	4,418.18 (8.463)
Էլեկտրաէներգիայի դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ ցենտ)/կՎտժ	1.88 (0.4)
Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադ		
Հզորության դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ դոլար)/կՎտ/ամիս	1,021.84 (1.957)
Էլեկտրաէներգիայի դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ ցենտ)/կՎտժ	4.913 (0.9)
Որոտան ՀԷԿ-երի կասկադ		
Հզորության դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ դոլար)/կՎտ/ամիս	2694.09 (5.160)
Էլեկտրաէներգիայի դրույք	ՀՀ դրամ (ԱՄՆ ցենտ)/կՎտժ	8.446 (1.6)

ՎԷԱ էլեկտրակայանները համար գործում է հաստատուն սակագների ռեժիմը: Հաստատուն սակագներն[17] ըստ էլեկտրակայանների ներկայացված են Աղյուսակ 1.5-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.5: ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՎԷԱ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ԱՌԱՆՑ 20% ԱԱՀ, ՍԿՍԱԾ 2021Թ. ՀՈՒԼԻՍԻ 1-ից)

ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ	ՍԱԿԱԳԻՆ, ՀՀ ԴՐԱՄ (ԱՄՆ ՑԵՆՏ)/ԿՎՏԺ
Փոքր ՀԷԿ	
• խմելու ջրի խողովակի վրա կառուցված	11.637 (2.229)
• ոռոգման համակարգի վրա կառուցված	17.454 (3.343)
• բնական ջրահոսի վրա կառուցված	26.185 (5.016)
Հողմային էլեկտրակայան	
• Լիցենզիան ստացել է մինչև 2018 թ. նոյեմբերի 1-ը	47.013 (9.005)
• Լիցենզիան ստացել է 2018 թ. նոյեմբերի 2-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը	26.204 (5.016)
Կենսազանգվածային էլեկտրակայան	47.013 (9.005)
• Լիցենզիան ստացել է մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը	26.185 (5.016)

[15] https://psrc.am/uploads/files/Էլեկտրական Էներգիա/Սակագներ/Electricity_Tariffs-2021-22.pdf
[16] Փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 522.08 ՀՀ դրամ

[17] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153032

• Մինչև 30 ՄՎտ (ներառյալ), լիցենզիան ստացել է 2021թ. հունվարի 1-ից մինչև 2021 թ. դեկտեմբերի 31-ը	
Արևային էլեկտրակայան • Մինչև 1 ՄՎտ (ներառյալ), լիցենզիան ստացել է մինչև 2018 թ. նոյեմբերի 1-ը, • Մինչև 5 ՄՎտ (ներառյալ), լիցենզիան ստացել է 2018 թ. նոյեմբերի 2-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը, • Մինչև 1 ՄՎտ (ներառյալ), համայնքային նշանակության շահույթ չհետապնդող կազմակերպություններին տրամադրված լիցենզիա	 47.013 (9.005) 26.204 (5.019) 23.584 (4.517)

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԵՐ: 2020 թվականի հուլիս/օգոստոս ամիսներից Հայաստանում բնական գազի սպառողների համար գործում է նոր սակագնային կառուցվածք (Աղյուսակ 1.6): Այն տարբերակում է սակագներն ըստ խոցելի սպառողների, ջերմոցային տնտեսությունների և ամսական 10 000 մ^3-ից պակաս կամ ավելի սպառողների համար:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.6: ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ (20% ԱԱՀ ՆԵՐԱՌՅԱԼ, ՈՒԺԻ ՄԵՋ Է 2020թ. ՀՈՒԼԻՍԻ 19-ից և ՕԳՈՍՏՈՍԻ 1-ից)

	ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԽՈՒՄԲ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ	TARIFF
1.	**Խոցելի սպառողներ**		
	1.1 տարեկան մինչև 600 մ^3 բնական գազի համար	ՀՀ դրամ/1,000մ^3	100,000
	1.2 տարեկան 600 մ^3 -ը գերազանցող բնական գազի համար	ՀՀ դրամ/1,000մ^3	139,000
2.	**Ջերմոցային տնտեսություններ**		
	2.1 Նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար	$/1,000մ^3	224
	2.2 Ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար		
	ա. մինչև 10,000 մ^3-ի շրջանակում սպառվող բնական գազի համար	ՀՀ դրամ/1,000մ^3	139,000
	բ. 10,000 մ^3-ը գերազանցող բնական գազի համար	$/1,000մ^3	255.91
3.	**Գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող՝ պահածոների, խմիչքների և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող անձինք**	**$/1,000մ^3**	**224**
4.	**ՋԷԿ-եր**		
	4.1 ամսական մինչև 10,000 մ^3-ի շրջանակում սպառվող բնական գազի համար	ՀՀ դրամ/1,000մ^3	139,000
	4.2 ամսական 10,000 մ^3-ը գերազանցող բնական գազի համար	$/1,000մ^3	255.91
5.	**Այլ սպառողներ**		
	5.1 ամսական մինչև 10,000 մ^3-ի շրջանակում սպառվող բնական գազի համար	ՀՀ դրամ/1,000մ^3	139,000
	5.2 ամսական 10,000 մ^3-ը գերազանցող բնական գազի համար	$/1,000մ^3	255.91

ԱՅԼ ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐ: Դիտարկվող էներգակիրների ընտրությունն իրականացվել է հիմք ընդունելով Հայաստանի էներգետիկ հաշվեկշռում թվարկված վառելիքի տեսակները (Աղյուսակ 1.7): Վառելիքի տեսակները և դրանց գները ներառվել են մոդելում և հասանելի դարձվել կանխատեսվող պահանջարկի բավարարման նպատակով հետագա դիտարկման համար:[18]

ԱՂՅՈՒՍԱԿ 1.7: ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆԵՐԸ	
ՎԱՌԵԼԻՔԻ ՏԵՍԱԿ	ԳԻՆ, $/ՏՈՆ
Ածուխ	
Անտրացիտ (քարածուխ)	152.8
Բիտումային (շագանակագույն ածուխ)	113.6
Ածխի այլ տեսակներ	166.0
Յուղ	
Ավիացիոն բենզին	1,341.6
Հեղուկացված նավթային գազեր	561.7
Բենզին	560.7
Ինքնաթիռի վառելիք	779.6
Կերոսին	1,200.5
Դիզել	663.4
Քսայուղ	1,949.8
Բիտում	353.3
ՎԷԱ	Գինը՝ $/մ^3
Վառելափայտ	43.3
Կենսագոմաղբ	26.0
Գազ	Գինը՝ $/1,000մ^3
Բնական գազ	165
Միջուկային	Գինը՝ $/կգ
Ուրան	91

ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄԸ

Բազային տարում ընդհանուր ԷՎՍ-ն կազմել է 2.413 կիլոտոննա նավթային համարժեք (կտ ն.հ.), որից կենցաղային և տրանսպորտի ոլորտների սպառումը կազմում է մոտ 1,620 կտ ն.հ.: Վերջնական սպառողների ամենամեծ խումբը՝ տնային տնտեսություններն են, իսկ ամենափոքրը՝ գյուղատնտեսությունը: Բնական գազի սպառումը, որը կազմում է 1,460 կտ ն.հ. (ԷՎՍ-ի 60.5 %) ավելի շատ է, քան ցանկացած այլ վառելիքի սպառումը: Նկար 1.6-ը ներկայացնում է ԷՎՍ-ն ըստ ոլորտների և վառելիքի տեսակի 2019 թվականի համար:

[18] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (Վիճկոմ)

Տրանսպորտի ոլորտը երկրորդ ամենամեծ սպառողն է, որի մասնաբաժինը ընդհանուր ԷՎՍ-ում կազմում է 33.4 %-ը: Սպասարկման և արդյունաբերության ոլորտների սպառումը կազմել է համապատասխանաբար 18.7 % և 13.0 %: Գյուղատնտեսության ոլորտի սպառումը կազմում է ընդհանուր ԷՎՍ-ի ընդամենը 1 %-ը:



	Արդյունաբերություն	Տրանսպորտ	Բնակչություն	Գյուղատնտեսություն	Սպասարկում
Էլեկրաէներգիա	133.8	8.7	168	13.2	179.4
Ջեռուցում			0.2		
Վերականգնվող			85.9		4.3
Բնական գազ	161.7	480.8	557		260.8
Նավթամթերք	17.5	317	0.8	16.6	5.1
Ածուխ			0.8		1.8

Նկար 1.6: Էներգիայի վերջնական սպառումն ըստ ոլորտների և վառելիքի տեսակների

ՄՈԴԵԼԻ ԿԱՐԳԱԲԵՐՈՒՄԸ[19]

Բազային տարվա տվյալների համապատասխանեցումը մոդելի բնութագրերին իրականացվել է հետևյալ քայլերով.

• Վիճակագրական տվյալների հավաքագրում,

• Վիճակագրական տվյալների վերաձևակերպում և համապատասխանեցում մոդելի պահանջներին,

• Միջանկյալ հաշվարկների իրականացում, ենթադրությունների մշակում և բացակայող վիճակագրական տվյալների լրացում,

• Մոդելի միջոցով բազային տարվա վերջնական սպառման ծավալների որոշում և արդյունքների համեմատություն վիճակագրական սպառման ծավալի հետ,

• Մուտքագրված տվյալների բարելավում և նոր իտերացիաների միջոցով իրական սպառմանը համապատասխանող արդյունքների ստացում:

Տվյալների հավաքագրումից և վերաձևակերպումից հետո մոդելը կարգաբերվել է ըստ բազային տարվա տվյալների: Նշվածը կարևոր է, քանի որ մոդելը պետք է արտացոլի տնտեսության նախնական վիճակը՝ աշխատուժի, կապիտալի, էներգետիկայի ոլորտի ու տնտեսության միջև կապերի տեսանկյունից: Կարգաբերման ենթակա հիմնական փոփոխականներն են բոլոր տեխնոլոգիաների հզորությունները և շահագործման մակարդակները, ինչպես նաև արտահանման, ներմուծման, արտադրության և սպառման քանակական ցուցանիշներն ըստ էներգակիրների: Բազային տարվա համար մոդելի արդյունքները ցույց տվեցին, որ վերաձևակերպված տվյալները և մոդելավորված

[19] http://www.iea-etsap.org/web/Documentation.asp

հարաչափերը համապատասխանում են, ինչը նշանակում է, որ մոդելը պատրաստ է բազային սցենարի մշակման համար:

ԲԱԺԻՆ 2. ԲԱԶԱՅԻՆ ՍՑԵՆԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Մոդելի[20] նպատակն է՝ բավարարել էներգիայի ապագա պահանջարկը, որը կախված է տնտեսության ակտիվ զարգացումից: Այդ նպատակով տնտեսական զարգացումը կանխատեսելու համար դիտարկվել են մի շարք տնտեսական ցուցանիշներ (Աղյուսակ 2.1):

ԱՂՅՈՒՍԱԿ 2.1: ՀՆԱ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

	2024	2027	2030	2033	2036	2040	2045	2050
ՀՆԱ, միլիոն ԱՄՆ դոլար	15,254	17,159	19,301	21,711	24,422	28,570	34,760	42,291
Բնակչություն, հազար մարդ	2,977	2,976	2,967	2,952	2,934	2,905	2,865	2,816
Բնակիչների քանակը մեկ տնային տնտեսությունում	3.4	3.3	3.3	3.2	3.2	3.1	3.1	3.0
ՀՆԱ-ի աճ, %	4.2	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0
Բնակչության աճ, %	0.08	-0.01	-0.10	-0.16	-0.21	-0.25	-0.28	-0.34
ՀՆԱ-ի աճ՝ մեկ շնչի հաշվով, %	4.2	4.0	4.1	4.2	4.2	4.3	4.3	4.4

Մինչև 2026 թվականը ՀՆԱ-ի աճի կանխատեսման համար օգտագործվել են Արժույթի միջազգային հիմնադրամի[21] տվյալները: Հաջորդող տարիների համար ՀՆԱ-ի աճի տեմպը ընդունվել է անփոփոխ և հավասար 2026 թվականի աճի տեմպին:

Բազային տարվա դրությամբ բնակչության տվյալներն հավաքագրվել են Վիճկոմի տարեգրքերից: Հաշվի առնելով, որ Հայաստանի բնակչության աճի տեմպերի վերաբերյալ ազգային կանխատեսում չկա, ուսումնասիրության նպատակով օգտագործվել են Միավորված ազգերի կազմակերպության կանխատեսումները:[22]

Մեկ տնային տնտեսությունում բնակիչների քանակը հաշվարկվել է հիմք ընդունելով Վիճկոմի հրապարակված բնակարանային ֆոնդի[23] տվյալները:

Աղյուսակ 2.2-ում ներկայացված է ՀՆԱ-ի աճն ըստ տնտեսության ոլորտների, որն հաշվարկվել է հիմք ընդունելով Վիճկոմի տարեգրքերից հասանելի տասնամյա ռետրոսպեկտիվ տվյալները և Microsoft Excel[24]-ում միտումները բնութագրող ստանդարտ գրաֆիկները:

[20] https://iea-etsap.org/index.php/etsap-tools/model-generators/times
[21] https://www.imf.org/external/datamapper/NGDP_RPCH@WEO/ARM
[22] https://www.macrotrends.net/countries/ARM/armenia/population-growth-rate
[23] https://www.armstat.am/file/doc/99526853.pdf
[24] https://www.armstat.am/am/?nid=12&id=01001&submit

ԱՂՅՈՒՍԱԿ 2.2: ՀՆԱ-Ն ԵՎ ՀՆԱ-Ի ԱՃԻ ՏԵՄՊԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ								
ՀՆԱ-Ն ԸՍՏ ՈԼՈՐՏԻ, ՄԻԼԻՈՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ	2024	2027	2030	2033	2036	2040	2045	2050
Առևտուր/Սպասարկում	7,855	8,945	10,185	11,598	13,207	15,705	19,501	24,214
Աճի տեմպ, %	4.4	4.4	4.4	4.4	4.4	4.4	4.4	4.4
Մասնաբաժինը ընդհանուր ՀՆԱ-ում, %	51.5	52.1	52.8	53.4	54.1	55.0	56.1	57.3
Արդյունաբերություն	3,186	3,673	4,195	4,751	5,343	6,186	7,327	8,563
Աճի տեմպ, %	5.2	4.9	4.5	4.2	4.0	3.7	3.4	3.2
Մասնաբաժինը ընդհանուր ՀՆԱ-ում, %	20.9	21.4	21.7	21.9	21.9	21.7	21.1	20.2
Շինարարություն	777	753	734	717	703	686	669	654
Աճի տեմպ, %	-1.2	-1.0	-0.9	-0.8	-0.7	-0.6	-0.5	-0.4
Մասնաբաժինը ընդհանուր ՀՆԱ-ում, %	5.1	4.4	3.8	3.3	2.9	2.4	1.9	1.5
Գյուղատնտեսություն	1,836	1,918	2,005	2,095	2,190	2,322	2,499	2,690
Աճի տեմպ, %	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5
Մասնաբաժինը ընդհանուր ՀՆԱ-ում, %	12.0	11.2	10.4	9.7	9.0	8.1	7.2	6.4
Այլ	1,601	1,869	2,182	2,549	2,979	3,671	4,765	6,170
Աճի տեմպ, %	8.0	5.3	5.3	5.3	5.3	5.4	5.4	5.3
Մասնաբաժինը ընդհանուր ՀՆԱ-ում, %	10.5	10.9	11.3	11.7	12.2	12.8	13.7	14.6

ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆԵՐԸ

Վառելիքի գների կանխատեսումն իրականացվել է հիմք ընդունելով Համաշխարհային էներգետիկայի զարգացման 2021 թ. կանխատեսման (ՀԷԶԿ) շրջանակում ԵՄ-ի համար ներկայացված կանխատեսումները:[25] Մասնավորապես, համաձայն 2021 թ. ՀԷԶԿ կանխատեսումների, մինչև 2030 թվականը բնական գազի գները կաճեն 84 %-ով, իսկ մինչև 2050 թվականը՝ ևս 8%-ով (2030-ի նկատմամբ): Նավթամթերքի գները մինչև 2050 թվականը կաճեն 110%-ով, ածուխի գները մինչև 2030 թվականը կաճեն 34%-ով, իսկ 2030 թվականից մինչև 2050 թվականը կնվազեն 6%-ով: Ուրանի գինը մինչև 2050 թվականը կաճի 43%-ով:[26] Վառելիքի գների կանխատեսումը Հայաստանի համար ներկայացված 2.1–2.4 նկարներում:

[25] https://iea.blob.core.windows.net/assets/888004cf-1a38-4716-9e0c-3b0e3fdbf609/WorldEnergyOutlook2021.pdf
[26] https://www.researchgate.net/publication/309020124_Ուրանի գնի կանխատեսում հիմք ընդունելով ուրանի դեպոզիտային շահագործումը



.

Նկար 2.1: Բնական գազի գնի կանխատեսում, ԱՄՆ դոլար$_{2019}$/1,000 մ^3



	2024	2027	2030	2033	2036	2040	2045	2050
Ավիացիոն բենզին	1,556	1,867	2,239	2,284	2,330	2,393	2,475	2,559
Հեղուկ գազ	663	795	954	973	993	1,020	1,054	1,090
Բենզին	595	714	856	874	891	915	946	979
Ռեակտիվ շարժիչների վառելիք	706	847	1,016	1,036	1,057	1,086	1,123	1,161
Կերոսին	1,544	1,851	2,221	2,266	2,311	2,374	2,455	2,538
Դիզվառելիք	667	800	960	979	999	1,026	1,061	1,097
Քսայուղ	2,972	3,564	4,275	4,362	4,450	4,540	4,726	4,886
Բիտում	294	353	423	432	440	449	468	484

Նկար 2.2: Նավթամթերքի գների կանխատեսում, ԱՄՆ դոլար$_{2019}$/տոն

	2024	2027	2030	2033	2036	2040	2045	2050
Քարածուխ	125	136	149	147	146	144	142	134
Բիտումային ածուխ	102	111	121	120	119	118	116	114
Այլ ածխատեսակներ	114	124	135	134	133	131	129	127

Նկար 2.3 Ածուխի գնի կանխատեսում, ԱՄՆ դոլար$_{2019}$/տոն



Նկար 2.4: Ուրանի գնի կանխատեսվում, ԱՄՆ դոլար$_{2019}$/կգ

ՕԳՏԱԿԱՐ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Մոդելի աշխատանքն ապահովող պահանջարկի կանխատեսումներն իրականացվել են օգտակար էներգիայի ծառայությունների՝ լուսավորության, հովացման, ջեռուցման, սննդի պատրաստման, մարդկանց և ապրանքների տեղափոխման և այլնի համար: Մոդելը պետք է բավարարի օգտակար էներգիայի պահանջարկի կանխատեսվող մակարդակներն բոլոր ոլորտներում և ենթաոլորտներում՝ ընտրելով վառելիքի այն տեսակներն ու տեխնոլոգիաները, որոնք կապահովեն պահանջարկի ծածկումն էներգահամակարգի համար նվազագույն ծախսերով:[27]

[27] Օգտակար էներգիան սահմանված է ծառայությունների մակարդակով, ինչպիսիք են պահանջվող ներքին ջերմաստիճանը և սահմանային պայմանները, օրինակ՝ ջերմային էներգիայի կորուստները և տարածքի ջեռուցման դեպքում առաջացած օգուտները: https://ec.europa.eu/energy/sites/ener/files/documents/mapping-hc-final_report_wp1.pdf

Էներգիայի պահանջարկն առավելապես զգայուն է ՀՆԱ-ի և ժողովրդագրական հարաչափերի փոփոխությունների նկատմամբ: Էլաստիկությունը հաշվարկում է օգտակար էներգիայի փոփոխությունը՝ ՀՆԱ-ի կամ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի փոփոխությունների համեմատ և փոփոխվում է տնտեսական ոլորտներից և վերջնական սպառման տվյալներից կախված: Տնտեսության աճի հետ աճում է նաև օգտակար էներգիայի ընդհանուր պահանջարկը: Հասանելի ռետրոսպեկտիվ վիճակագրական տվյալների և էլաստիկության սահմանված ցուցանիշների[28] վերլուծության հիման վրա իրականացվել է էներգիայի վերջնական սպառման կանխատեսում ըստ ոլորտների: Օգտակար էներգիայի կանխատեսվող պահանջարկի կառուցվածքը և աճը 2024-2050 թվականներին ներկայացված է Աղյուսակ 2.3-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 2.3: ՕԳՏԱԿԱՐ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ՈԼՈՐՏ, ԿՏ Ն.Հ.	2024	2027	2030	2033	2036	2040	2045	2050
Գյուղատնտեսություն	9.6	9.7	9.7	9.8	9.9	10.0	10.1	10.3
Առևտուր	685	738	796	855	919	1,011	1,139	1,285
Արդյունաբերություն	422	476	533	595	660	752	874	1,008
Բնակչություն	877	930	985	1,044	1,105	1,176	1,271	1,375
Տրանսպորտ, մ[ու/տ]կմ								
Միջազգային ավիափոխադրումներ	2,296	2,513	2,750	3,009	3,293	3,714	4,316	5,015
Ավտոբուսներ	5,483	5,759	6,049	6,353	6,673	7,125	7,732	8,391
Առևտրային բեռնատարներ	1,749	1,956	2,187	2,446	2,736	3,176	3,827	4,612
Ծանրաքարշ բեռնատարներ	3,066	3,355	3,672	4,018	4,397	4,959	5,763	6,697
Թեթև տրանսպորտային միջոցներ	11,077	11,896	12,796	13,781	14,855	16,431	18,659	21,228
Արտաճանապարհային միջոցներ	0.09	0.09	0.09	0.09	0.09	0.09	0.09	0.09
Երկաթուղային բեռնափոխադրումներ	897	931	966	1,003	1,041	1,094	1,164	1,239
Երկաթուղային ուղևորափոխադրումներ	142	150	159	167	177	190	208	227

Բնակչության ոլորտի մասնաբաժինը օգտակար էներգիայի պահանջարկի մեջ ամենամեծն է մինչև 2050 թվականը, որին հաջորդում է առևտրի ոլորտը: Գյուղատնտեսության ոլորտում օգտակար էներգիայի պահանջարկը 0.3%-ից պակաս է: Պահանջարկի մնացած մասը բաժին է ընկնում արդյունաբերության և տրանսպորտի ոլորտներին:

Գյուղատնտեսության, առևտրի, արդյունաբերության և բեռնափոխադրումների ոլորտներում էներգիայի պահանջարկի աճի հիմնական շարժիչ ուժերն են ՀՆԱ-ն և ՀՆԱ-ի աճի նկատմամբ պահանջարկի էլաստիկությունը[29]: Բնակչության և ուղևորափոխադրումների ոլորտներում հիմնական շարժիչ ուժը մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն է և պահանջարկի Էլաստիկությունը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճի նկատմամբ: Որոշ ոլորտների համար կիրառվում են տվյալ ոլորտին բնորոշ պահանջարկի շարժիչ ուժեր, ինչպիսին է ջերմաստիճան-օրեր[30]-ը առևտրի ոլորտում կամ բնակչությունը և նոր ու գոյություն ունեցող տների քանակի

[28] https://crawford.anu.edu.au/sites/default/files/publication/crawford01_cap_anu_edu_au/2016-07/understanding_the_energy-gdp_elasticity_a_sectoral_approach.pdf

[29] https://veda-documentation.readthedocs.io/en/latest/index.html#

[30] Մեկ աստիճան/օրը համեմատում է տվյալ տարածքի համար գրանցված միջին արտաքին ջերմաստիճանը ստանդարտ ջերմաստիճանի հետ, որը սովորաբար ԱՄՆ-ում 65° Ֆարենհայտ է: Որքան ծայրահեղ է արտաքին ջերմաստիճանը, այդքան բարձր է աստիճան/օրերի քանակը: Բարձր աստիճան/օրերի քանակը, առհասարակ, հանգեցնում է տարածքի ջեռուցման կամ հովացման համար ավելի շատ էներգիայի օգտագործման:

փոփոխությունները բնակչության ոլորտում: Հիմնական ենթադրություններն ըստ ոլորտների ներկայացված են ստորև:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ոլորտի համար կանխատեսվել է պահանջարկի աճի դանդաղ տեմպ, հաշվի առնելով ոլորտում զգալի զարգացումների փոքր հավանականությունը: Պահանջարկի էլաստիկությունը պլանավորման ողջ ժամանակահատվածում և բոլոր ենթաոլորտների համար ընդունվել է 0.2:

ԱՌԵՎՏՈՒՐ

Ենթադրություն է արվել, որ առևտրի ոլորտի զարգացումը պայմանավորված է լինելու հյուրանոցների, ռեստորանների, խանութների և այլնի արագ զարգացմամբ: Դրա արդյունքում աճելու է տարածքների ջեռուցման, հովացման, լուսավորության, սննդի պատրաստման և այլ օգտակար էներգիայի պահանջարկը: Այս ոլորտի համար պահանջարկի էլաստիկությունը ընդունվել է 0.51 պլանավորման ողջ ժամանակահատվածում և բոլոր ենթաոլորտների համար.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ենթադրություն է արվել, որ պահանջարկի աճը հիմնականում պայմանավորված է լինելու ոչ մետաղական հանքանյութերի, սննդի և ծխախոտի ենթաոլորտների զարգացմամբ: Այս ոլորտի էլաստիկությունը ընդունվել է 0.86 պլանավորման ամբողջ ժամանակահատվածի համար:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Թեև բնակչության թվաքանակի համար կանխատեսվել է աննշան նվազում, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն շարունակելու է աճել: Մոդելի տրամաբանության տեսակետից սա նշանակում է, որ կբարելավվեն կենցաղային պայմանները, այսինքն՝ բնակչությունը կունենա ավելի շատ կենցաղային սարքեր գնելու հնարավորություն: Առանձնատներում և բնակարաններում ավելի շատ տարածքներ կջեռուցվեն (ներկայումս շատ բնակարաններ/առանձնատներ ջեռուցվում են մասնակի): Միևնույն ժամանակ կանխատեսվում է, որ մեկ տնային տնտեսության հաշվով մարդկանց թիվը կնվազի, ինչի արդյունքում բնակարանների թիվը կաճի և ավելի շատ էներգիա կպահանջվի տարածքների ջեռուցման, հովացման, լուսավորության և այլնի համար: Մոդելը ներառում է նաև այլ գործոններ, որոնք նվազեցնում են էներգիայի սպառումը, օրինակ՝ հին շենքերի քանդման տեմպը, բարձր արդյունավետությամբ նոր շենքերի կառուցումը և կենցաղային սարքերի էներգաարդյունավետության բարելավումը: Այս բոլոր գործոնները արտացոլվել են մոդելում և արդյունքները ցույց են տալիս, որ զուտ սպառումը ցանցում շարունակելու է աճել: Պլանավորման ողջ ժամանակահատվածում պահանջարկի էլաստիկությունը տարածքների ջեռուցման համար ընդունվել է 0.5, տարածքների հովացման և ջրի տաքացման համար՝ 0.42, իսկ սննդի պատրաստման և այլ սարքերի համար՝ 0.2:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Ենթադրություն է արվել, որ բնակչության կենցաղային պայմանների բարելավման համար անհրաժեշտ կլինի ունենալ ուղևորների/բեռների փոխադրման միջոցների ավելի շատ տեսակներ, ինչի արդյունքում տրանսպորտի ոլորտում պահանջարկը կաճի: Պահանջարկի էլաստիկությունը թեթև տրանսպորտային միջոցների մասով կնվազի 1.5-ից մինչև 0.6, ավտոբուսների մասով՝ 1.0-ից մինչև 0.6, իսկ ուղևորների միջազգային ավիափոխադրումների մասով կմնա 0.51 մակարդակում մինչև պլանավորման ժամանակաշրջանի ավարտը: Ծանրաքարշ բեռնատարների, բեռների միջազգային ավիափոխադրումների և առևտրային բեռնատարների համար էլաստիկությունը կնվազի 1.1-ից մինչև 0.95: Երկաթուղային ուղևորների փոխադրման համար պահանջարկի էլաստիկությունը ընդունվել է 0.64, իսկ բեռների փոխադրման համար՝ 0.5 պլանավորման ողջ ժամանակահատվածի համար.

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Պլանավորման ժամանակաշրջանում էլեկտրաէներգետիկայի ոլորտի նվազագույն ծախսերով զարգացման հնարավորությունները գնահատելու համար անհրաժեշտ է մոդելավորել գոյություն ունեցող էլեկտրակայանները և ապագա արտադրության այն տեխնոլոգիաները, որոնք կիրառելի կլինեն Հայաստանի համար: Ստորև բերված երեք աղյուսակներում ներկայացված են մոդելում դիտարկվող գոյություն ունեցող էլեկտրակայանների (Աղյուսակ 2.4) և առաջարկվող տեխնոլոգիաների տեխնիկատնտեսական բնութագրերը (Աղյուսակներ 2.5 և 2.6):

ԱՂՅՈՒՍԱԿ 2.4: 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԸ

ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ	ԴՐՎԱԾՔԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ՄՎՏ	ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏ	ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԻԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԾԱԾԿՄԱՆԸ	ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ	ՇԱՊ ԾԱԽՍԵՐ[31] (ԱՄՆ ՑԵՆՏ/ԿՎՏԺ)	ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ		
						2019[32]	2020	2021
Հրազդանի ՋԷԿ	410	3	0.95	0.36	1.53	0.13	0.80	
Հրազդան-5 կայան	467	13	0.95	0.42	1.36	0.22	0.80	
Երևան ՀԾԳՑԷ	228.6	22	0.95	0.49	1.17	0.77	0.80	
Երևան ՀԾԳՑԷ-2[33]	254	25	0.95	0.56	1.66			0.85
ՀԱԷԿ	407.5	7	0.95	0.27	0.71	0.57		
Կոգեներա-ցիա	8	31	0.95	0.28	1.79	0.11	0.90	
Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադ	561.4	31	0.95	1	0.93	Դասորդատվականության գործակիցները ներկայացված են Աղյուսակ 2.6 -ում		
Որոտան ՀԷԿ-երի կասկադ	404.2	31	0.95	1	1.43			
Փոքր ՀԷԿ	374.9	31	0.28	1	4.60			
ՖՎ առևտրային կայան	10	25	0.15	1	5			
ՖՎ (ինքնավար էներգաար-տադրող)	39.44	25	0.17	1	2.50			
Հողմային էլեկտրա-կայան	4.2	31	0.09	1	5			

Գոյություն ունեցող էլեկտրակայանների համար փոփոխական և հաստատուն շահագործման և պահպանման ծախսերն այն ծախսերն են, որոնք ներառված են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) կողմից հաստատված 2019 թվականի սակագներում, բացառությամբ վառելիքի գների: Մոդելավորման նպատակներից ելնելով, սակագնի հաշվարկում ներառված վառելիքի ծախսերը նվազեցվել են, իսկ փոփոխական

[31] Ներառում է փոփոխական և հաստատուն շահագործման և պահպանման ծախսերը:

[32] 2019 թվականի համար թվերը ներկայացնում են փաստացի յուրացված արժեքները

[33] Երևանի ՀԾԳՑԷ-2 կայանը շահագործման է հանձնվել 2021 թվականին, սակայն մոդելավորման նպատակներից ելնելով ներկայացվում է որպես գոյություն ունեցող էլեկտրակայան:

ծախսերը վերահաշվարկվել են մոդելավորման պահանջներին համապատասխան այնպես, որ յուրաքանչյուր տեխնոլոգիայի համար հասանելի լինի վառելիքի ծախսը (եթե առկա է), ներդրումային ծախսերը (եթե առկա է) և շահագործման և ծախսերը:

ԱՂՅՈՒՍԱԿ 2.5: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Տեխնոլոգիա	Հզորություն ՄՎտ	Շահագործման ժամկետ, տարիներ	Պիկ	Արդյունավետություն	Ներդրումային ծախսեր, ԱՄՆ դոլար$_{2019}$/ԿՎտ							Փոփոխական ծախսեր, ԱՄՆ ցենտ /ԿՎտժ	Տարեկան պատրաստականության գործակից
					2020	2025	2030	2035	2040	2045	2050		
Գազի այրմամբ													
ՀՇԳՑԷ	250	30	0.95	0.56	988.0	988.0	988.0	988.0	988.0	988.0	988.0	0.67	0.85
Գազային տուրբին	234	30	0.95	0.38	647.4	647.4	647.4	647.4	647.4	647.4	647.4	2.15	0.85
Ատոմային													
Առաջադեմ թեթև ջրային ռեակտոր (ԱԹՋՌ)-1,080	1,080	60	0.95	0.33	4,141.5	4,057.8	3,975.9	3,912.2	3,865.2	3,830.3	3,727.4	1.66	0.85
Առաջադեմ ԹՋՌ (ԱԹՋՌ)-300 (ՓՄՌ)	300	60	0.95	0.33	6,082.4	5,959.5	5,839.2	5,745.7	5,776.6	5,625.3	5,474.2	2.44	0.85
Առաջադեմ ԹՋՌ (ԱԹՋՌ)-600	600	60	0.95	0.33	4,940.2	4,840.3	4,742.6	4,666.6	4,610.5	4,568.9	4,446.1	1.99	0.85
ԹՋՌ (ՋՋԷՌ) -1000	1,080	60	0.95	0.33	6,521.0	5,732.3	5,039.0	4,883.7	4,770.4	4,687.2	4,446.1	1.08	0.85
ԹՋՌ (ՋՋԷՌ) -300 (ՓՄՌ)	300	60	0.95	0.33	9,576.9	8,418.6	7,400.3	7,172.4	7,006.0	6,883.8	6,529.7	1.59	0.85
ԹՋՌ (ՋՋԷՌ) -600	600	60	0.95	0.33	7,778.8	6,838.0	6,010.9	5,825.7	5,690.6	5,591.3	5,303.7	1.29	0.85
Հեղուկ աղային ռեակտորով էլեկտրակայան	500	60	0.95	0.41	-	-	4,000.0	3,250.0	2,500.0	1,750.0	1,000.0	2.44	0.85
Նատրիումի ջերմության աղբյուր	345	60	-	1	-	-	126.8	103.0	79.3	55.5	31.7	-	0.85
Նատրիումի պահեստավորման համակարգ	155	60	-	1	-	-	0.001	0.001	0.001	0.001	0.001	0.72	0.23
Վերականգնվող													
Երկրաջերմային	-	40	0.90	1	7,667.3	7,667.3	7,667.3	7,667.3	7,667.3	7,667.3	7,667.3	3.99	0.89
Հիդրոկուտակիչ	-	80	0.95	1	2,958.8	2,958.8	2,958.8	2,958.8	2,958.8	2,958.8	2,958.8	1.36	0.33
Արևային – ջերմային կենտրոնացման կայան - 6 ժամ պահեստավորմամբ	-	25	0.40	1	3,677.0	3,483.0	3,290.0	2,709.0	2,446.7	2,209.8	1,995.8	1.88	Պատրաստականության գործակիցները ներկայացված են Աղյուսակ 2.6 -ում
Արևային – ջերմային կենտրոնացման կայան - 12 ժամ պահեստավորմամբ	-	25	0.50	1	5,046.0	4781.0	4,515.0	3,718.0	3,358.1	3,033.1	2,739.5	1.50	
Լոռիբերդ ՀԷԿ	66	80	0.90	1	2,426.8	2,426.8	2,426.8	2,426.8	2,426.8	2,426.8	2,426.8	2.20	
Շնող ՀԷԿ	75	80	0.90	1	2,681.2	2,681.2	2,681.2	2,681.2	2,681.2	2,681.2	2,681.2	2.20	
Փոքր ՀԷԿ	-	80	0.35	1	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	4.75	
ՖՎ կենտրոնական	-	25	0.18	1	840.0	756.0	672.0	630.0	588.0	563.0	538.0	1.25	
ՖՎ Մասրիկ 1	55	25	0.18	1	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	4.19	
ՖՎ առևտրային	-	25	0.18	1	1,031.0	969.0	825.0	709.0	650.0	588.0	526.0	1.38	

ԱՂՅՈՒՍԱԿ 2.5: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Տեխնոլոգիա	Հզորություն ՄՎտ	Շահագործման ժամկետ, տարիներ	Պիկ	Արդյունավետություն	Ներդրումային ծախսեր, ԱՄՆ դոլար$_{2019}$/ԿՎտ							Փոփոխական ծախսեր, ԱՄՆ ցենտ /ԿՎտժ	Տարեկան պատրաստականության գործակից
					2020	2025	2030	2035	2040	2045	2050		
ՖՎ (ինքնավար էներգաարտադրող)	-	25	0.18	1	1,325.0	1,245.0	1,060.0	927.0	835.0	755.0	676.0	2.81	
ՖՎ լողացող	-	20	0.18	1	1,000.0	900.0	800.0	750.0	700.0	670.2	640.5	1.74	
Հողմային	-	25	0.30	1	1,327.0	1,244.8	1,226.7	1,215.7	1,204.9	1,194.1	1,183.5	1.44	
Էլեկտրաէներգիայի կուտակում													
Լիթիում-իոնային	-	25	0.95	0.9	1,103.3	775.6	386.1	355.9	328.1	302.5	278.9	1.56	0.85

ԱՂՅՈՒՍԱԿ 2.6: ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՎԵՑ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ												
ՏԵԽՆՈԼՈԳԻԱ/ ԿԱՅԱՆ	ԳՆ-Օ	ԳՆ-Գ	ԳՆ-Պ	ԱՌ-Օ	ԱՌ-Գ	ԱՌ-Պ	ԱՇ-Օ	ԱՇ-Գ	ԱՇ-Պ	ՁՄ-Օ	ՁՄ-Գ	ՁՄ-Պ
Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադ	0.15	0.17	0.29	0.10	0.10	0.13	0.01	0.02	0.07	0.03	0.04	0.12
Որոտան ՀԷԿ-երի կասկադ	0.26	0.29	0.45	0.32	0.31	0.28	0.24	0.26	0.37	0.23	0.25	0.44
Լոռիբերդ ՀԷԿ	0.60	0.61	0.62	0.31	0.32	0.31	0.24	0.24	0.25	0.25	0.25	0.26
Շնող ՀԷԿ	0.76	0.77	0.78	0.39	0.40	0.39	0.30	0.30	0.31	0.31	0.31	0.33
Փոքր ՀԷԿ	0.55	0.53	0.44	0.24	0.24	0.22	0.19	0.18	0.13	0.19	0.18	0.14
Արևային ՎՖ	0.37	0.03	0.00	0.42	0.07	0.00	0.25	0.00	0.00	0.20	0.00	0.00
Արևային – ջերմային կենտրոնացման կայան - 6 ժամ պահեստավորմամբ	0.47	0.23	0.47	0.47	0.23	0.47	0.47	0.23	0.47	0.47	0.23	0.47
Արևային – ջերմային կենտրոնացման կայան - 12 ժամ պահեստավորմամբ	0.65	0.33	0.65	0.65	0.33	0.65	0.65	0.33	0.65	0.65	0.33	0.65
Հողմային	0.40	0.28	0.53	0.38	0.36	0.55	0.22	0.16	0.17	0.26	0.24	0.22

ԳՆ – գարուն, ԱՌ– ամառ, ԱՇ– աշուն, ՁՄ – ձմեռ, Օ – օր, Գ – գիշեր, Պ- պիկ

ԲԱԶԱՅԻՆ ՍՑԵՆԱՐԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն բաժնում ներկայացվում են Հայաստանի տնտեսության, էլեկտրաէներգետիկայի ոլորտի զարգացման ուղիների, նոր արտադրական հզորությունների և պահանջարկի մասով տեխնոլոգիաների ներդրման տեմպերի և էներգիայի հնարավոր աղբյուրների օգտագործմանն առնչվող ենթադրությունները:

- Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսման համաձայն՝ Հայաստանի ՀՆԱ-ի աճի տեմպը կկազմի 4.2% 2024 թվականին և 4.0% 2026 թվականին: Հաջորդող տարիներին ՀՆԱ-ի աճի տեմպը ընդունվում է անփոփոխ՝ 2026 թվականի աճի տեմպին հավասար:

- Բնակչության թվաքանակը փոքր բացասական աճ կցուցաբերի՝ -0.2% պլանավորման ժամանակահատվածի համար:

- Արդյունաբերության ոլորտը օգտակար էներգիայի հիմնական սպառողներից է, գրանցելով մոտ 4% միջին տարեկան աճ: Բնակչության և առևտրի ոլորտների մասնաբաժինները համեմատաբար ցածր են և միջին տարեկան կտրվածքով կազմում են համապատասխանաբար 2.2% և 2.7%:

- Վառելիքների գների կանխատեսումը հիմնված է ՀԷՉԿ 2021-ում ներկայացված ԵՄ երկրների համար ԷՄԳ-ի կողմից կատարված գնի կանխատեսումների վրա:

- Ենթադրություն է արվել, որ էլեկտրաէներգիայի կորուստները հաղորդման և բաշխման ցանցերում կնվազեն բազային տարում 8.6 %-ից մինչև 8.1 % պլանավորման ժամանակահատվածի վերջում:

- Հաշվի առնելով Արցախում 2020 թվականին ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը, էլեկտրաէներգիայի ներմուծման և արտահանման մոդելավորումը կատարվել է 2021թ. փաստացի տվյալներով: Բազային սցենարում Հայաստանի էլեկտրաէներգիայի փոխհոսքերը մոդելավորվել են առանց Վրաստանի հետ էլեկտրաէներգիայի փոխանակման: Նշվածի արդյունքում պայմաններ են ստեղծվել գնահատելու Հայաստանում էներգիայի կանխատեսվող պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ աղբյուրները և արտադրության տեխնոլոգիաները:

- Հաշվի առնելով Հայաստանում առկա էներգետիկ պաշարները և տեխնիկական հնարավորությունները, կիրառվել են արտադրական հզորությունների սահմանափակումներ (Աղյուսակ 2.6):

- Հայաստանի կառավարությունը Հայաստանի էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրում կարևորում է Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում միջուկային էներգիայի առկայությունը: Բազային սցենարի մշակման ընթացքում իրականացված բազմաթիվ մոդելավորումները ցույց տվեցին, որ միակ տարբերակը, որտեղ մոդելը ընտրում է ատոմակայան կառուցելը, այն մոդելն է, որտեղ ջերմային կայանի կառուցման սահմանափակում է դրված: Ստորև ներկայացված բազային սցենարի համար ենթադրություն է արվել, որ պլանավորման ժամանակահատվածում նոր ջերմային էլեկտրակայան չի կառուցվելու:

ԲԱԶԱՅԻՆ ՍՑԵՆԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սույն բաժինն ամփոփում է բազային սցենարի հիմնական արդյունքները, որտեղ արտացոլվում են Հայաստանի էներգետիկայի բնագավառի զարգացման կառուցվածքը, հաշվի առնելով ներկայումս որդեգրված քաղաքականությունը: Միևնույն ժամանակ, ցուցադրում է ապագայի պահանջարկի բավարարման համար դիտարկված էլեկտրաէներգիայի արտադրության նվազագույն ծախսերով տարբերակը: Արդյունքների հիման վրա մշակվել են մի շարք լրացուցիչ քաղաքականության սցենարներ և իրականացվել են զգայունության վերլուծություններ՝ էներգետիկայի ոլորտի քաղաքականության և պլանավորման գործընթացում ելակետային տվյալներ ապահովելու նպատակով (Բաժին 3): Բազային սցենարը խորը պատկերացում է տալիս առաջնային էներգապաշարների համախառն մատակարարման (ԱԷՀՄ) և ԷՎՍ-ի մասին ըստ էներգիայի աղբյուրների, տնտեսության ոլորտների և արտադրության տեխնոլոգիաների այնպես, որ Հայաստանում հնարավոր լինի կանխատեսվող պահանջարկը բավարարել նվազագույն ծախսերով.

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԱՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԽԱՌՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Բնական գազը շարունակում է մնալ ԱԷՀՄ-ի ամենամեծ բաղադրիչը պլանավորման ամբողջ ժամանակահատվածում: Դրա մասնաբաժինը 2024 թվականի դրությամբ կազմում է մոտ 52% և 2027 թվականին ՀԱԷԿ-ի շահագործումից դուրս բերելուց հետո աճում մինչև 74%: ՎԷԱ մասնաբաժինը ԱԷՀՄ-ում 7%-ից աճում է մինչև 14%: Նավթամթերքի մասնաբաժինը պլանավորման ամբողջ ժամանակահատվածում գրեթե անփոփոխ է (Աղյուսակ 2.7):

ԱՂՅՈՒՍԱԿ 2.7: ԱՌԱՋՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԱՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԽԱՌՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ (ԿՏ Ն.Հ.) ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆԵՐԸ (%)

ԱՊՐԱՆՔ	2024	2027	2030	2033	2036	2040	2045	2050
Կենսավառելիք	79.9	79.8	83.4	87.6	88.7	90.1	91.9	77.0
Ածուխ	3.2	3.4	3.7	4.0	4.2	4.6	5.0	5.5
Էլեկտրաէներ-գիա	4.8	4.8	4.8	4.8	4.8	4.8	4.8	4.8
Բնական գազ	2,012.9	2,578.8	2,643.4	2,045.1	2,162.6	2,273.7	2,446.4	2,587.4
Ատոմային	1,071.2	-	-	1,198.8	1,198.8	1,198.8	1,198.8	1,198.8
Նավթամթերք	439.0	450.0	461.5	475.8	492.1	520.5	570.1	629.5
Վերականգնվող	281.5	368.7	408.5	389.8	416.0	487.8	565.2	730.1
ԸՆԴԱՄԵՆԸ	**3,893**	**3,485**	**3,605**	**4,206**	**4,367**	**4,580**	**4,882**	**5,233**
ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ԱԷՀՄ-ում (%)								
Կենսավառելիք	2.1	2.3	2.3	2.1	2.0	2.0	1.9	1.5
Ածուխ	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1
Էլեկտրաէներգ իա	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1
Բնական գազ	51.7	74.0	73.3	48.6	49.5	49.6	50.1	49.4
Ատոմային	27.5	-	-	28.5	27.4	26.2	25	23
Նավթամթերք	11.3	12.9	12.8	11.3	11.3	11.4	11.7	12.0
Վերականգնվող	7.2	10.6	11.3	9.3	9.5	10.7	11.6	14.0

Հաշվի առնելով բնական գազի շարունակական մեծ մասնաբաժինը ԱԷՀՄ -ում, սցենարը գնահատել է գոյություն ունեցող գազատարերի հզորությունները և ապագայում կանխատեսվող ծավալները փոխադրելու դրանց հնարավորությունները: Արդյունքները (Աղյուսակ 2.8) ցույց են տալիս, որ 2030 թվականին բնական գազի մատակարարումը Ռուսաստանից կհասնի իր առավելագույն մակարդակին պլանավորման ժամանակահատվածում և կկազմի գազատարի առավելագույն թողունակության 76%-ը: Հարավային սահման տանող գազատարի հզորությունը կօգտագործվի բազային տարվա մակարդակով, այսինքն՝ մինչև պլանավորման ժամանակաշրջանի ավարտը գազատարը լիցքավորված կլինի ընդհամենը 14%-ի չափով:

ԱՂՅՈՒՍԱԿ 2.8: ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ՏԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱԶԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ

ԳԱԶԱՏԱՐ	ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ՄԼՐԴ ՄՅ		ՆԵՐԿՐՈՒՄ, ՄԼՐԴ ՄՅ	
	ՕՐԱԿԱՆ	ՏԱՐԵԿԱՆ	2019	ՕՐԱԿԱՆ
Ռուսաստանից	0.010	3.65	2.17	2.77
Հարավային սահմանից	0.008	2.92	0.40	0.40
Ընդամենը	**0.018**	**6.57**	**2.57**	**3.17**

Ակնկալվում է, որ 2024 թվականին էներգակիրների ներմուծման մասով անկախության մակարդակը կկազմի 36.8%: Էներգետիկ անկախությունը երկրի ներքին էներգաարտադրության մասնաբաժինն է ԱԷՀՄ-ում: 2027 թվականին ՀԱԷԿ-ի շահագործումից դուրս հանելուց հետո էներգետիկ անկախությունը կնվազի ավելի քան երկու անգամ կազմելով 12.9 տոկոս: ՎԷԱ,

մասնավորապես՝ արևային էներգիայի, մեծածավալ ներդրման, ինչպես նաև նոր ատոմակայանի կառուցման շնորհիվ այս ցուցանիշը կվերականգնվի և 2050 թվականին կհասնի 38.3 %-ի: ԷՎՍ-ի բաշխումն ըստ ոլորտների և վառելիքի տեսակի ներկայացված է Աղյուսակ 2.9-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 2.9: ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄԸ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԵՎ ՎԱՌԵԼԻՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ, կտ ն.հ.

ՈԼՈՐՏ	ԱՊՐԱՆՔ	2024	2027	2030	2033	2036	2040	2045	2050
Գյուղատնտեսություն	Էլեկտրաէներգիա	14.5	14.3	13.7	13.8	13.7	13.6	13.5	13.5
	Նավթամթերք	16.6	16.4	16.1	15.8	15.8	15.7	15.6	15.6
	Ընդամենը	**31**	**31**	**30**	**30**	**29**	**29**	**29**	**29**
	% ընդհանուրից	1.1	1.1	1.0	0.9	0.9	0.8	0.8	0.7
Առևտուր	Ածուխ	2.1	2.2	2.3	2.4	2.5	2.7	2.9	3.1
	Էլեկտրաէներգիա	198.3	208.7	220.3	233.4	248.8	272.1	304.2	340.9
	Բնական գազ	292.1	306.8	324.5	343.5	363.8	392.9	431.6	477.7
	Նավթամթերք	5.8	6.2	6.5	6.9	7.3	7.9	8.7	9.5
	Վերականգնվող	4.9	5.1	5.1	5.2	5.2	5.5	6.1	7.0
	Ընդամենը	**503**	**529**	**559**	**591**	**628**	**681**	**753**	**838**
	% ընդհանուրից	18.1	18.3	18.5	18.7	19.0	19.3	19.7	20.0
Արդյունաբերություն	Կենսավառելիք	0.004	0.004	0.004	0.5	0.005	0.005	0.006	2.4
	Էլեկտրաէներգիա	157.5	170.3	184.8	200.9	215.7	236.1	251.4	276.1
	Բնական գազ	223.3	248.6	274.4	299.5	326.2	360.9	394.4	438.5
	Նավթամթերք	18.8	20.1	21.4	22.5	23.8	25.9	26.5	28.3
	Ընդամենը	**400**	**439**	**481**	**523**	**566**	**623**	**672**	**745**
	% ընդհանուրից	14.4	15.2	15.9	16.5	17.1	17.7	17.5	17.8
Բնակչություն	Կենսավառելիք	79.9	79.8	83.4	87.1	88.7	90.1	91.9	74.6
	Ածուխ	1.1	1.3	1.4	1.6	1.7	1.9	2.1	2.4
	Էլեկտրաէներգիա	183.6	180.2	187.1	198.6	210.1	223.6	241.7	291.1
	Բնական գազ	695.2	728.6	758.9	785.8	811.0	843.3	884.5	901.7
	Ցածր ջերմաստիճանի ջերմություն	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2
	Նավթամթերք	0.9	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.1
	Վերականգնվող	3.9	3.6	3.2	3.0	2.6	2.2	1.5	0.6
	Ընդամենը	**965**	**995**	**1,035**	**1,077**	**1,115**	**1,162**	**1,223**	**1,272**

ԱՂՅՈՒՍԱԿ 2.9: ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄԸ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԵՎ ՎԱՌԵԼԻՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ, կտ ն.հ.

ՈԼՈՐՏ	ԱՊՐԱՆՔ	2024	2027	2030	2033	2036	2040	2045	2050
	% ընդհանուրից	34.7	34.4	34.2	34.0	33.7	33.0	31.9	30.3
Տրանսպորտ	Էլեկտրաէներգիա	8.9	9.1	9.3	11.1	11.7	12.5	13.7	13.7
	Բնական գազ	471.8	473.8	478.4	480.7	488.2	509.2	568.0	645.7
	Նավթամթերք	404.9	418.6	433.5	452.2	473.4	509.2	572.9	649.7
	Ընդամենը	**886**	**901**	**921**	**944**	**973**	**1,031**	**1,155**	**1,309**
	% ընդհանուրից	31.8	31.1	30.4	29.8	29.4	29.2	30.1	31.2
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ	**2,784**	**2,895**	**3,025**	**3,166**	**3,311**	**3,526**	**3,832**	**4,193**

Պլանավորման ժամանակահատվածում ԷՎՍ-ն կաճի ավելի քան 50 %-ով, առանց ոլորտների մասնաբաժինների էական փոփոխության: Բնակչության և առևտրի ոլորտների մասնաբաժինները ԷՎՍ-ում ամենաբարձր աճն են ցուցադրում 2024- 2050 թվականներին, գրանցելով համապատասխանաբար 4% և 2% աճ: Բնական գազը, էլեկտրաէներգիան և նավթամթերքը կապահովեն ընդհանուր ԷՎՍ-ի մոտ 98 %-ը, ընդորում բնական գազը կապահովի ամենաբարձր մասնաբաժինը պլանավորման ողջ ժամանակահատվածում:

Բազային սցենարը ենթադրում է, որ պլանավորման ժամանակահատվածի ավարտին ԷՎՍ-ի 24%-ը կվերագրվի կատարելագործված և ավելի բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաներով սպառմանը (Նկար 2.5): Իսկ մնացած մասը՝ առկա տեխնոլոգիաներով սպառմանը, որոնք օգտակար ծառայության ժամկետի ավարտից հետո կփոխարինվեն նոր, սակայն նույն տեսակի տեխնոլոգիաներով:



	2024	2027	2030	2033	2036	2040	2045	2050
Առռաջադեմ	10	13	19	25	32	42	52	64
Բարելավված	361	510	593	733	821	924	1,044	1,095
Ավելի արդիական	1	2	3	3	4	5	7	24
Ստանդարտ	876	1,223	1,612	1,911	2,186	2,453	2,697	2,999
Առկա	1,536	1,147	799	493	269	103	32	12
Ընդամենը	2,784	2,895	3,025	3,166	3,311	3,526	3,832	4,193

Նկար 2.5: Վերջնական սպառման տեխնոլոգիաների փոխարինումն ըստ տեսակների, կտ ն.հ [34]

[34] IEA-ETSAP սահմանումների համաձայն, էներգիայի սպառման յուրաքանչյուր տեխնոլոգիա ունի արդյունավետության մակարդակ (https://iea-etsap.org/index.php/energy-technology-data/energy-demand-technologies-

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԵՐԸ

Համակարգի ընդհանուր կանխատեսվող ծախսերը կազմում են շուրջ 68 մլրդ ԱՄՆ դոլար (2019թ. դոլարով) ամբողջ պլանավորման ժամանակահատվածի համար (Նկար 2.6): Նշված ծավալում ներառված են գյուղատնտեսության, առևտրի, արդյունաբերության, բնակչության և տրանսպորտի ոլորտներում էներգիայի մատակարարման և էներգիայի վերջնական սպառման պահանջարկի բավարարմանն առնչվող բոլոր ծախսերը: Ներդրումների կատեգորիայում մոդելը ներառում է ոչ միայն նոր էլեկտրակայանների կամ նոր արդյունաբերական օբյեկտների կառուցման համար պահանջվող, այլև գոյություն ունեցող օբյեկտների փոխարինման ծախսերը: ԷՎՍ-ի համար փոփոխական և հաստատուն շահագործման և պահպանման ծախսերը ըստ ոլորտների ներառում են բոլոր այն ծախսերը (բացառությամբ վառելիքի), որոնք անհրաժեշտ են մատակարարման, հաղորդման և բաշխման համակարգերում և պահանջարկի կողմում բոլոր տեխնոլոգիաների և տեղակայանքների անվտանգ ու անխափան շահագործումն ապահովելու համար.



Նկար 2.6: Մինչև 2050 թվականը համակարգի ընդհանուր բերված ծախսերի կառուցվածքը՝ (միլիոն ԱՄՆ դոլար, %)

Պլանավորման ողջ ժամանակահատվածում համակարգի ընդհանուր ծախսերի կեսը ներդրումներն են և միայն 26%-ը՝ վառելիքը: Հաստատուն և փոփոխական ծախսերը (առանց վառելիքի) կազմում են ընդհանուր ծախսերի համապատասխանաբար 15% և 9%: Ներդրումային ծախսերի միայն 6% -ն է ուղղված էլեկտրաէներգետիկայի ոլորտին: Ամենամեծ մասնաբաժինը տրանսպորտի ոլորտին հատկացված ներդրումներն են (31%):

ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մոդելի էլեկտրաէներգետիկական ոլորտի նվազագույն ծախսերով զարգացման կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 2.10-ում: Պլանավորման ժամանակահատվածում

data), այն է՝ Առկա, Ստանդարտ, Ավելի արդիական, Բարելավված և Առաջադեմ (ավելի ցածր մակարդակից մինչև ավելի բարձր):

համապատասխան արտադրության ծավալներն ըստ տեխնոլոգիաների և էլեկտրակայանների ներկայացված են Աղյուսակ 2.11-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 2.10: ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՅԱՆ/ԿԱՅԱՆԻ ՏԵՍԱԿ), ՄՎՏ

ԿԱՅԱՆ	2024	2027	2030	2033	2036	2040	2045	2050
Երևան ՀԾԳՑԷ	234	234	234	234	234	234		
Երևան ՀԾԳՑԷ-2	254	254	254	254	254	254	208	
Հրազդան-5 կայան	467	467	467					
Կոգեներացիա	8	8	8	8	8	8	8	8
Որոտան ՀԷԿ-երի կասկադ	404	404	404	404	404	404	404	404
Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադ	561	561	561	561	561	561	561	561
Լոռիբերդ ՀԷԿ							66	66
Շնող ՀԷԿ							75	75
Փոքր ՀԷԿ-եր (առկա)	375	375	375	375	375	375	375	375
Փոքր ՀԷԿ-եր (նոր)	64	64	64	64	64	64	64	64
ՀԱԷԿ (առկա)	440							
ԱԷԿ (նոր)				600	600	600	600	600
Արևային (առկա)	49	49	49	49	49	49	49	
Արևային (նոր)	369	845	982	1,026	1,130	1,452	1,727	2,630
Հիդրոկուտակիչ կայան (նոր)							65	130
Լիթիում-իոնային պահեստավորում (նոր)				0.02	0.02	0.02	0.02	0.06
Հողմային (առկա)	4	4	4	4	4	4	4	4
Հողմային (նոր)	4	97	190	190	190	409	409	371
Ընդամենը	3,233	3,362	3,592	3,769	3,873	4,414	4,616	5,289

ԱՂՅՈՒՍԱԿ 2.11: ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԳՎՏԺ

ԿԱՅԱՆ	2024	2027	2030	2033	2036	2040	2045	2050
Երևան ՀԾԳՑԷ	71	1,672	1,672	22	59	60		
Երևան ՀԾԳՑԷ-2	1,471	1,891	1,891	248	417	343	364	
Հրազդան-5		591	510					
Կոգեներացիա	7	7	7	7	7	8	8	26
